


ԱՅՍՈՐԿԱ ՄԵՆԱՏՆՏԵՍԱՎԱՐԸ ՎԱՂՎԱ ԿՈՆԽՈԶՆԻԿՆ Ե



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1931

09.07.2013

30.204

338.1(47)
3m-47

07 FEB 2010

Կ. ՅԱՐՈՎՈՑ



334

Ա. ՅԱՐՈՎԱ
ՄԵՆԱՏՆՏԵՍԱՎԱՐԸ
ՎԱՂՎԱ ԿՈԼԽՈՋՆԻԿՆ Ե

ԿՈԼԽՈՋՆԻԿՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՆԱՏՆՏԵՍԱՎԱՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԱ-
ԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆ. ԿՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ
1931

Քարգւ. Ս. 4.



43210.63

Главлит № А-85.345.

Заказ № 3636

Тираж 7.000

Книжная ф-ка Центриздата Народов СССР. Москва,
Шлюзовая набережная, 10.

ՄԵԾԱԳՈՒՅՆ ԲԵԿՈՒՄԸ

Կուսակցության XVI համագումարը «Կոլխոզային շարժման և գյուղատնտեսության վերելքի» մասին ընդունած իր բանաձևի մեջ միլիոնավոր գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացումը բնորոշում է, վորպես մեծագույն բեկումն իՍՅՄ-յան գյուղատնտեսությունների զարգացման մեջ և ընդգծում է այդ բեկման համաշխարհային-սլատմական նշանակությունը: Այդ վորոշման մեջ համագումարը հայտարարում է.

«Այսուհետև իՍՅՄ-յան կարևորագույն հացատրիկային ռայոններում գյուղը բաժանվում է յերկու հիմնական մասերի՝ կոլխոզների և կոլտնտեսության իշխանության իրական ու հաստատ նեցուկն են հանդիսանում, և վոչ կոլխոզների չքավորների ու միջակների, վորոնք առայժմ դեռ չեն ցանկանում մտնել կոլխոզների մեջ, բայց վորոնց կոլխոզների մասսայական փորձը, անկասկած, կհամոզի համեմատաբար ամենակարճ ժամկետում կոլեկտիվացման ուղին անցնելու անհրաժեշտությունը:»

Համագումարը կարևոր է համարում նիշել, վոր կուսակցությանը հաջովեց հասնել այդ բեկմանը իՍՅՄ-յան գյուղատնտեսության զարգացման մեջ միայն՝

ա) շնորհիվ ինդուստրիայի զարգացման արագ տեմպին, վորը գյուղատնտեսությունը կոլեկտիվ հիմքերով վերակառուցելու բանալին է.

բ) շնորհիվ կոտակերացման մասսայական ծավալման, մեքենա-տրակտորային կայանների կազմակերպման և սովխոզների զարգացման.

գ) շնորհիվ հարձակման՝ գյուղի կապիտալիստական տարրերի դեմ (կուլակություն) — միջակի հետ դաշինքի հիման վրա, վոր կոլխոզային շինարարության հիմքն է սովյալ մոմենտին.

դ) շնորհիվ գյուղական չքավորների ու բաւարակների կազմակերպության գործի ծավալման.

յե) շնորհիվ հակահեղափոխական արոցկիզմի և աջ թեքման ջախջախման:

Կուսակցության XVI համագումարի վորոշումները պատահանջում են կոմունիստական կուսակցության, ամբողջ բանվոր դասակարգի, կոլխոզնիկների ամբողջ մասսայի ուժերի ահագին մոբիլիզացիա՝ այդ վորոշումները լիովին կենսագործելու համար:

Կուսակցության XV համագումարը տվեց կոլեկտիվացման լոզունգը:

Կուսակցության XVI համագումարը տալիս է համատարած կոլեկտիվացման ավարտման լոզունգը, կուլակություն, վորպես դասակարգի, համատարած կոլեկտիվացման հիման վրա սկսված լիկվիդացիայի ավարտման լոզունգը:

XVI համագումարի վորոշումները տարբերվում են նախընթաց բոլոր համագումարների վորոշումներից նրանով, վոր հանդիսանում են կոլխոզների մեջ միացած միլիոնավոր գյուղացիական տնտեսությունների առողյա աշխատանքի գործնական ծրագիրը:

Նախընթաց համագումարները կարող եյին վորոշումներ կայացնել գյուղի հետ կապը ամրացնելու մասին, միջակի հետ դաշինքը ամրացնելու մասին, կարող եյին վորոշումներ կայացնել գյուղատնտեսության վերաբերյալ այն հաշվով, վոր այդ վորոշումները պետք է իրականացնեյին անհատական տնտեսությունների միջոցով: Նրանք

վորոշումներ եյին կայացնում սովխոզներ կառուցելու անհրաժեշտություն մասին, վորպես խոշոր տնտեսություն նմուշներ (և, իհարկե, հացի աղբյուրներ), վորոշումներ եյին կայացնում գոյություն ունեցող փոքրաթիվ կոլխոզների զարգացման և նրանց ամեն կերպ աջակցելու մասին. XV համագումարը հայտարարեց կոլեկտիվացման լոզունգը, իսկ XVI համագումարի վորոշումները արդեն խոսում են կոլխոզնիկի մասին, իբրև խորհրդային իշխանության իրական ու հաստատ նեցուկի մասին: Համագումարի վորոշումները խոսում են հիմնական միջակային մասսաների արմատական շրջադարձի մասին դեպի սոցիալիզմը, հեքյաթական արագություն աճող սովխոզների ու կոլխոզների իրական գործնական հաջողությունների մասին:

Համագումարը այս անգամ արդեն ընդունեց վոչ միայն ընդհանուր վորոշումներ գյուղատնտեսության ընդհանուր խնդիրների մասին. նա ընդունեց վորոշումներ, վորոնք առողյա գործնական դեկալորություն են հանդիսանում տասնյակ միլիոնավոր յերեկվա մենատնտեսավարների — այսօրվա կոլխոզնիկների համար:

Կուսակցության XVI համագումարի վորոշումները գործողությունների, աշխատանքի, կոնկրետ տնտեսական խնդիրների համար մղվող պայքարի ծրագիր են հանդիսանում վոչ միայն միլիոնավոր բանվորների համար ֆարքիկներում, գործարաններում, յերեկաթուղիների վրա, հանքերում, այլ և կոլխոզների մեջ միացած տասնյակ միլիոնավոր չքավոր ու միջակ գյուղացիության համար:

* * *

Կուսակցության XVI համագումարի վորոշումներից մեկին — կոլխոզնիկների ու մենատնտեսավարների փոխհարաբերությունների հարցին է նվիրված այս գրքույկը:

ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մեր յերկրի գյուղատնտեսութեան մեջ ահագին հեղաշրջում է կատարվել: Այդ հեղաշրջման ուղեկցում է մեքենայի բուռն արմատացումը գյուղատնտեսութեան մեջ: Մեքենան սկսում է արագորեն փոխարինել առանձին գյուղացու լարված, սակայն քիչ արտադրողական աշխատանքը հողի սուսանձին բեկորի վրա:

Կատարվում է մասսայական անցումն բարձրարտական «տեխնիկայից» իսկական տեխնիկային, հիմնված ագրոտեխնիկական և ագրոքիմիական գիտությունների նորագույն նվաճումների վրա:

Սակայն, այդ հեղաշրջման հիմնական պատմական իմաստը յետամնաց տեխնիկական նորագույն տեխնիկայով փոխարինվելու մեջ չի կայանում: Այդ հեղաշրջման պատմական իմաստը կայանում է նրանում, Վոր միլիոնավոր չքավոր ու միջակ գյուղացիներ շարժվեցին դեպի կոլտոջները, միլիոնավոր անհատական տնտեսություններ միացան խոշոր կոլեկտիվ տնտեսությունների մեջ, միլիոնավոր միջակ գյուղացիներ, հետևելով չքավորներին, անցան սոցիալիստական ուղին: Դրանով իսկ պատմական ամենակարճ ժամկետում վոչնչանում է այն տնտեսական հիմքը, վորի վրա միայն կարող էր վերածնվել կապիտալիզմը մեր յերկրում — մանր անհատական գյուղացիական տնտեսությունը: Լենինը ասում էր՝

«Քանի մենք ապրում ենք մանր գյուղացիական յերկրում, կապիտալիզմի համար Ռուսաստանում կա ավելի հաստատուն տնտեսական բազա, քան թե կոմունիզմի համար: Ամեն մեկը, ով ուշադրությամբ դիտել է գյուղի կյանքը, համեմատած քաղաքի կյանքի հետ, գիտե, վոր մենք կապիտալիզմը արմատախիլ չենք արել ներքին թշնամու հիմնաքարը, նրա հիմքը չենք վոչնչացնել: Այդ հիմքն է մանր տնտեսությունը...»

Այդ հեղաշրջման մեծագույն պատմական նշանակությունը նրանում է, վոր կապիտալիստական հիմքերով տարվող միլիոնավոր մանր գյուղացիական տնտեսությունները վերածվում են խոշոր հասարակական կոլեկտիվ տնտեսությունների — սոցիալիստական հիմքերի վրա:

Մանր գյուղացիական տնտեսությունները, վերածվելով խոշոր հասարակական արտադրության, դրանով իսկ նեցուկ են դառնում ԽՍՀՄ-յան մեջ սոցիալիստական հասարակակարգի հիմքը կառուցելու համար:

Սա յե գլխավորն ու եյականը, սրա մեջ է մեր յերկրում կատարվող գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման վճռական նշանակությունը:

Միանգամայն պարզ է, վոր միլիոնավոր գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացումը չեր կարող կատարվել պատահաբար, անսպասելիորեն: Այդ կոլեկտիվացումը նախապատրաստված էր կուսակցության և խորհրդային իշխանության նախընթաց ամբողջ աշխատանքով: Ահա թե ինչ էր ասում ընկ. Ստալինը իր գեկուցման մեջ կուսակցության XVI համագումարում այն պայմանների մասին, վորոնք նախապատրաստել էյին միլիոնավոր գյուղացիական տնտեսությունների փոխանցումը կոլեկտիվացման ուղին.

«Գյուղացիության շրջադարձը դեպի կոլեկտիվացումը միանգամից չսկսվեց: Այդ շրջադարձը չեր ել կարող սկսվել միանգամից: Ծիշո է, կոլեկտիվացման լոգունգը կուսակցությունը հայտարարել էր դեռևս XV համագումարում: Սակայն, գյուղացիության մասսայական շրջադարձի համար դեպի սոցիալիզմը դեռ բավական չեր լոգունգ հայտարարելը: Շրջադարձի համար պահանջվում է թեկուզ մի հանգամանք ևս, այն է՝ վորպեսզի իրենք գյուղացիական մասսաները համոզվեն հայտարարված լոգունգի ուղիղ լինելու մեջ և ընդունեն այն իբրև իրենց սեփական լոգունգը: Հենց այդ պատճառով այդ շրջադարձը նախապատրաստվում էր ծա-

ծուկ: Նա պատրաստվում էր մեր զարգացման ամբողջ ընթացքով, մեր ինդուստրիայի զարգացման ամբողջ ընթացքով, և ամենից առաջ — գյուղատնտեսությանը մեքենաներ ու տրակտորներ մատակարարող ինդուստրիայի զարգացմամբ: Նա պատրաստվում էր կուլակության դեմ վճռական պայքարի քաղաքականությամբ և 1928 ու 1929 թ.թ. մեր հասցած թերությունների նոր ձևերով, վորոնք կուլակային տնտեսությունը դնում էյին չքավոր-միջակային մասսաների վերահսկողության տակ: Նա պատրաստվում էր գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացմամբ, վորը ընտելացնում էր անհատ գյուղացուն գործը կոլեկտիվորեն վարելու: Նա պատրաստվում էր կոլխոզների ցանցով, ուր գյուղացին ստուգում էր տնտեսության կոլեկտիվ ձևերի առավելությունը անհատական տնտեսության հանդեպ: Պատրաստվում էր նա, վերջապես, ամբողջ ԽՍՀՄ-յան մեջ ցրված և նոր անխնդիր դիմված խորհրդային տնտեսությունների ցանցով, ուր գյուղացին հնարավորություն էր ստանում համագլխելու նոր տեխնիկայի ուժի և առավելությունների մեջ:

Սխալ կլինեի տեսնել մեր սովխոզների մեջ լոկ հացի աղբյուր: Իրականում սովխոզները իրենց նոր տեխնիկայով, շրջապատի գյուղացիներին հասցրած ոգնությամբ, իրենց անորինակ տնտեսական թափով դարձան այն առաջնորդող ուժը, վորը հեշտացրեց գյուղացիական մասսաների շրջադարձը և քաջեց նրանց կոլեկտիվացման ուղիով:

Ահա թե ինչ հիման վրա առաջ յեկավ մեկլիոնավոր չքավորների ու միջակների այն մասսայական կոլխոզային շարժումը, վորը սկսվեց 1929 թ. յերկրորդ կեսին և վոր իրենով սկիզբը դրեց մեծ բեկման շրջանին՝ մեր յերկրի կյանքում:

Տեխնիկա, մեքենա, պլան, գլխություն՝ միանային ուժի, աշխատանքի պապենական ձևերի, կոնկուրենցիայի փոխարեն — ահա թե ինչ է բերում իր հետ մանր տնտեսություններից կոլխոզներին անցնելը:

Միլիոնավոր գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացմանը ուղեկցում է տեխնիկական հեղափոխությունը, վորը հնարավոր է միայն գյուղացիական մանր տնտեսու-

թյունների խոշոր, կոլեկտիվ տնտեսությունների մեջ միանալու պայմաններում:

Բայց առաջին ժամանակները և գյուղացիական ինվենտարի հասարակ գումարման միջոցով կազմակերպված կոլխոզները արդեն այնպիսի ահագին առավելություններ են ներկայացնում, կոլխոզիկների յեկամուտների այնչափ արագ աճում են տալիս համեմատած այն յեկամտի հետ, վոր նրանք ստանում էյին մենատնտեսավարության ժամանակ, վոր այդ անմիջապես յուրաքանչյուր չքավոր ու միջակ գյուղացու աչքին է զարնում:

Իսկ յերբ մենք ԽՍՀՄ-յան բոլոր գյուղացիներին միացնենք կոլխոզների մեջ և լիակատար տեխնիկական հիմք ստեղծենք մեր գյուղատնտեսության համար, յերբ մենք լիովին կոլեկտիվացնենք ամբողջ ԽՍՀՄ-յան գյուղատնտեսությունը, իսկ դա մի քանի տարվա խնդիր է, այն ժամանակ մեր գյուղատնտեսությունը այնպիսի հսկայական բարձրության կհասնի, վոր մեր յերկիրը կդառնա իսկապես առատության յերկիր: Յեվ դա ֆանտազիա չէ, մտացածին բան չէ, ճարպիկ ֆուդ չէ:

Դա անվիճելի փաստ է: Այդ գեղեցիկ ապացուցին կուսակցության XVI համագումարում ընկ. ընկ. Ստալինը, Կուլբիշևը և Յակովլևը իրենց գեկուցումների մեջ: Դա պարզ ապացուցում են համագումարի ընդունած բանաձևերը:

Այդ միանգամայն անվիճելիորեն ապացուցվում է սովխոզների և կոլխոզների շինարարության այն ահագին աշխատանքով, վորը ծավալվում է ներկայումս մեր յերկրում կատաղի տեմպերով:

Դա շատ գեղեցիկ ապացուցվում է առաջին կոլխոզային գարունով. չնայած կուլակի կատաղի ընդդիմադրությանը, ցանված է 7—8 միլիոն հեկտարով ավելի, քան անցյալ տարի: Յեվ դա միայն մի գարնան ընթացքում:

Դա փառավորապես ապացուցվում է նրանով, վոր հիմնականում լուծված է հացահատիկային պրոբլեմը, այսինքն վոչնչացված է հացի պակասը, վոր մենք ունեյինք անցյալ տարի: Յեւ այժմ արդեն մենք խոսում ենք հացի մասին ցանքսերի տարածութեան հետագա արագ զարգացման և բերքատվութեան բարձրացման տեսակետից, վորպեսզի ուժեղացնենք սպառումը յերկրի ներսում և լայնացնենք հացի արտահանութեանը:

Արդեն իսկ առաջին կոլխոզային գարունը, չնայած տեղի ունեցած սխալներին, չնայած այն մարդկանց պակասութեանը, վորոնք փորձված լինեն խոշոր կոլեկտիվ արտադրութեան կազմակերպութեան մեջ, տալիս է մեզ բերքատվութեան բարձրացումը և ցուցադրում է կոլխոզնիկի աշխատանքի արտադրողականութեան խիստ բարձրացումը, համեմատած նրա յերեկվա աշխատանքի հետ իր անհատական տնտեսութեան մեջ:

Կոլխոզներում անմիջապես սկսվում է գյուղատնտեսական արտադրութեան արագ ու հագին լայնացումը, մինչդեռ մինչև այժմ գյուղատնտեսութեանը չափազանց յետ եր մնում բոլոր թափով աճող արդյունաբերութեանից, յետ եր մնում քաղաքի ու գյուղի աշխատավորութեան արագորեն աճող պահանջներից:

Իր գեկուցման մեջ կուսակցութեան XVI համագումարում ընկ. Յակովլևը բերում է չափազանց ցուցիչ տվյալներ այն մասին, թե ինչպե՞ս աճում է աշխատանքի արտադրողականութեանը գյուղացիական անհատական տնտեսութեանից կոլխոզի անցնելիս:

«Դուրս է գալիս, — և այդ պետք է իմանա վոչ միայն կուսակցութեան յուրաքանչյուր անդամը, վոչ միայն յուրաքանչյուր կոլխոզնիկը, այլ և յուրաքանչյուր մենատնտեսավար գյուղացին, — վոր կոլխոզների ստեղծման հետևանքով

քով կոլխոզների մեջ միացած գյուղացիների ցանքսերը, համեմատած նրանց անցյալ տարվա ցանքսերի հետ, աճել են 45 տոկոսով: Զգուշութեանից մենք վերցնում ենք այս դեպքում նվազագույն թիվը: Առանձին ուսոյոններում ցանքսերի աճը հասնում է 111 տոկոսի:

Կարելի չէ հաստատված հաշվել, վոր այս տարվա 36 միլիոն հեկտար կոլխոզային ցանքսերը ծնվել են անցյալ տարվա 24 միլիոն հեկտար գյուղացիական ցանքսերից: Այդ թիվը ստացված է կոլխոզնիկների անմիջական տված տեղեկութեաններից իրենց անցյալ տարվա ցանքսերի մասին:

Այդպիսի աճը ստացվել է, չնայած նրան, վոր կոլխոզները մոտ կեսը աշխատում էին առանց աշխատանքի վորեւ նորմա ունենալու: Իսկ աշխատանքի նորմա չունեցող կոլխոզը — դա կոլխոզի սաղմն է միայն, վորից պետք է աճի կոլխոզը, համենայն դեպս դա դեռ այն տնտեսութեանը չէ, վորը արդեն լիովին արտաբերել է իր բոլոր հնարավորութեանները»:

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում միլիոն տրակտոր կա: Նրանք պատկանում են խոշոր կապիտալիստական տնտեսութեաններին: Յեւ ի՞նչ ենք տեսնում: Վերջին տասը տարիների ընթացքում ցանքսերի տարածութեան աճը Ամերիկայում կազմում է միմիայն չորս միլիոն հեկտար:

«Միմիայն չորս միլիոն հեկտար: Իսկ մեզ մոտ, պողպատե ձիերի անչափ պակաս քանակի պայմաններում, մեծ մասամբ արտադրութեան գյուղացիական հին միջոցների սովորական, հասարակ գումարման պայմաններում կոլխոզնիկները ավելացրել են իրենց ցանքսերի տարածութեանը, համեմատած անհատական տնտեսութեան մեջ յեղածի հետ, 12 միլիոն հեկտարով, իսկ դա մեզ հնարավորութեան տվեց վոչ միայն փակելու կուլակութեան լիվիդացիայի հետևանքով առաջացած ցանքսերի տարածութեան բացը, այլ և ավելացնելու այս տարվա ցանքսերի ընդհանուր տարածութեանը մոտ 7, 4 միլիոն հեկտարով»:

Պետալանը, Հոդժողկոմատը և Կոլխոզցենտրը ստուգել են զանազան շրջաններում և ռայոններում, թե ինչպե՞ս են ազդել կոլխոզները գյուղատնտեսության արտադրողականության վրա։ Ստուգման հետևանքները ցույց են տալիս, Վոր կոլխոզներում բանվորական ուժի և արտադրության միջոցների ոգտագործումը 40—50%-ով ավելի բարձր է, քան թե անհատական գյուղացիական տնտեսության մեջ։ Յեւ զա համատարած կոլեկտիվացման հենց առաջին տարիին։

«Դա ցույց է տալիս, Վոր մենք կարող ենք մեր առաջ այնպիսի խնդիրներ դնել, Վորոնց մասին, իհարկե, Վոչ մի կապիտալիստական յերկիր յերազել անգամ չի կարող և Վորոնց մասին մենք ինքներս* ել չեյինք յերազում դեռ յերեկ, յերբ ունեյինք տնտեսավարության այլ սիստեմ հիմնականում։

Մենք, իբրև կուսակցություն, այս ցուցիչներով ենք դիմում դեռևս մենատնտեսավար մնացած չքավոր և միջակ գյուղացիներին։ Այս դեպքում մենք նայում ենք արդեն նրանց Վրա Վոչ իբրև սոսկ անհատական տնտեսությունների Վրա, այլ իբրև Վոչ-կոլխոզիկներ՝ չքավորներից ու միջակներից, Վորոնք առայժմ չեն մտել կոլխոզների մեջ, բայց Վորոնց կոլխոզների մասսայական փորձը, անկասկած, կհամոզի համեմատաբար ամենակարճ ժամկետերում կոլեկտիվացման ուղին անցնելու անհրաժեշտության մեջ։

Նրանց, այդ դեռևս Վոչ-կոլխոզիկների համար, — ասում եր ընկ. Յակովլեվը համագումարում, — յես մեջ կբերեմ այլևս մի քանի լրացուցիչ ցուցիչներ։

Ռոստոյանսկիյ շրջանի «Պատասխան կուլակներին» գյուղատնտեսական արտելը. այստեղ մեկ ձիու բռնավորումն է 8,7 հեկտար, իսկ հենց այդ արտելի կողքին աշխատող մենատնտեսավար գյուղացու մոտ միայն 3,58 հեկտար։

Պենզայի շրջանի, Կամենսկիյ ռայոնի գյուղատնտեսական արտելը իր ցանքսի պլանը գերակատարել է 32 տոկոսով։ Կողքին ազատ հող եր մնացել — այն ել ցանել են։ Դրա հետևանքով կոլխոզում մեկ ընտանիքին հասնում է

6 հեկտար, իսկ նույն շրջանի մենատնտեսավարի ընտանիքին — 2 հեկտար։

Ալեմոլինսկիյ շրջանի Նիկոլայիվկա գյուղի կոլխոզը ցանել է ընտանիքին 17-ական հեկտար, իսկ անցյալ տարի ընտանիքին հասնում եր միայն 2—3 հեկտար։ Նույն շրջանի Սեյդեն գյուղի կոլխոզի անդամները, Վորոնք մեծամասնությամբ բատրակներ են և հենց իրենց վկայությամբ «դեռ յերեկ փշրանքներ եյին հավաքում կուլակների սեղաններից», ցանել են 11-ական հեկտար ընտանիքին։

Նիժնիյ-Չիրսկիյ ռայոնի Սուվորովյան կոլխոզում անցյալ տարի հասնում եր մեկ տնտեսությանը 3,4 հեկտար, իսկ այժմ — 8,4։ Դուբրովսկիյ ռայոնի «Բուրեվիստինկ» կոլխոզում հասնում եր տնտեսությանը 11 հեկտար, իսկ այժմ — 15,5 հեկտար։ Նույն շրջանի «Մայակ» կոլխոզում հասնում եր յուրաքանչյուր տնտեսությանը 7,5 հեկտար, իսկ այս տարի կոլխոզում — 14,5 հեկտար։

Կարելի յե «գուշակել», Վոր մոտակա շաբաթները կոլխոզիկները կհայտնեն և, պետք է հուսալ, մեր թերթերը կտպեն տասնյակ հազարավոր նման որինակներ։ Իսկ զա ամենալավ ագիտացիան կլինի կոլխոզների ոգտին։

Շատ այսպես կոչված անհարմար հողեր այս զարնանը պարզվեցին իբրև լիովին հարմար հողեր։ Բայց «ոռոսաստանյան անհարմարությունների» պարզաբանման այդ շրջանը դեռ միայն սկսվում է։

Չնայած բոլոր սխալներին, չնայած նրան, Վոր չկան դեռևս կադրեր, չկան գյուղատնտեսական արտադրությունը կազմակերպել իմացող մարդիկ, չնայած, Վոր կոլխոզների գրեթե կիսում բացակայում են աշխատանքի վարձատրության նորմաները, չնայած մեխանիկական բազայի ծայրահեղ թուլությանը, չնայած այդ բոլորին, սոցիալիստական խոշոր արտադրության ուժը, հանձին սովխոզների ու կոլխոզների, պարզվեց անորինակ ուժեղություն, իսկ զա գլխավորն է։

Մենք տեսնում ենք, թե ինչպե՞ս մեր աչքերի առաջ իրագործվում են մասսայական մասշտաբով Վլադիմիր Իլյիչ Լենինի մարգարեական խոսքերը՝ —

«Ապրել ըստ հնույն — ինչպես ապրում եյինք պատե-
րազմից առաջ — չի կարելի, և մարդկային ուժերի, աշխա-
տանքի աշխարհի վատնումը, վորպիսին կապված է առան-
ձին մանր գյուղացիական տնտեսութեան հետ, չի կարող
հետադադրւում շարունակվել: Յերկու և յերեք անգամ կրարձրա-
նար աշխատանքի արտադրողականութեանը, յերկու և յերեք
անգամ կընայվեր մարդկային աշխատանքը գյուղատնտեսու-
թեան և մարդկային տնտեսութեան համար, յեթե այդ ցրված,
մանր տնտեսութեանից փոխանցում կատարվեր հասարակա-
կան տնտեսութեանը»:

Այդ փոխանցումը արդեն կատարել են մի քանի մի-
լիոն «ցրված, մանր տնտեսութեանները»: Այդ փոխան-
ցումը պատրաստվում են կատարելու նոր միլիոնները,
վորովհետև նրանք հասկացել են, վոր «ապրել ըստ հնույն»
այլևս չի կարելի:

* * *

Ամերիկայում ևս վերջին տարիները հեղաշրջում է
կատարվում: Բայց այն հեղաշրջումը բոլորովին այլ բնույթ,
այլ հիմք ունի: Ամերիկայում հաղթական յերթ են կատա-
րում տրակտորը, կոմբայնը և այլ զանազան խոշոր, բարդ
գյուղատնտեսական մեքենաները: Մեզ մոտ այդ յերթը
նոր է միայն սկսվում: Ամերիկայում մեքենայի այդ
յերթը, գյուղատնտեսութեան արտադրութեան միջոցների
այդ տեխնիկական հեղափոխութեանը ջայթալում է մի-
լիոնավոր մանր ֆերմերներին (կապալառու և հողատեր
գյուղացիներին), վերածում է նրանց մուրացիկների, վո-
րովհետև նրանք վիճակի չեն մեքենաներ ձեռք բերելու,
վորովհետև մեքենան ձեռնատու յե միայն խոշոր տնտեսու-
թեանը, վորի հետ մրցել նրանք անզոր են: Ամերիկայում
ևս հաղթանակում է խոշոր տնտեսութեանը, բայց հաղ-
թանակում է, նախ, կապիտալիստական տնտեսութեանը,
և ապա — հաղթանակում է մանր ֆերմերների հաշվին,

նրանց մուրացիկների վերածելու հաշվին: Սակայն, մանր
ֆերմերներին խեղդող այդ խոշոր տնտեսութեանների
ճնշող մեծամասնութեանը իրենց չափերով մեր միջակ
կոլխոզներից փոքր են: Իսկ մենք գիտենք, վոր աշխարհի
մեքենաները, ինչպիսին են տրակտորը և կոմբայնը, ամե-
նից ավելի ձեռնատու յե ոգտագործել միայն իսկապես խո-
շոր տնտեսութեանների մեջ:

Ամերիկայում միլիոնի մոտ տրակտորներ կան, մենք
ուսենք առաջ՝ 70 հազար: Ամերիկայում 45 հազար կոմբայն
կա, մենք ուսենք 1500: Մինչդեռ Ամերիկայում ցանքների
տարածութեան աճը 10 տարվա ընթացքում կազմել է
միայն 4 միլիոն հեկտար, գյուղատնտեսութեան արտա-
դրանքի ընդհանուր աճը այդ 10 տարվա ընթացքում հա-
սել է միայն 13,5 տոկոսի: Ամերիկայում տրակտորը, լի-
նելով խոշոր մասնավոր սեփականատերերի տիրապետու-
թեան առարկա, ոգտագործվում է 5 անգամ պակաս, քան
թե իՍՆՄ-յան մեջ: Ամերիկայում մեկ միլիոն տրակտոր-
ների և 45 հազար կոմբայնների գոյութեան պայմաններում
տնտեսութեանների 80 տոկոսը չի ոգտվում այդ զարմանալի
մեքենաներով: Իսկ իՍՆՄ-յան մեջ 3 տարուց ցանքների
ամբողջ տարածութեան կեսը, այսինքն մինչև 100 միլիոն
հեկտար, մշակվելու յե տրակտորներով: իՍՆՄ-յան մեջ
3 տարուց գյուղատնտեսութեանը աճելու յե մի քանի
անգամ, հասնելով ամերիկական գյուղատնտեսական ար-
տադրութեանը և անցնելով նրանից: իՍՆՄ-յան մեջ չի
յեղել, չկա և չալիսի լինի միլիոնավոր մանր գյուղացիա-
կան տնտեսութեանների ջայթալումը, տնտեսութեանների,
վորոնք մինչև այժմ ապրում եյին չջավորութեան և սղի-
տութեան մեջ: Ընդհակառակը, իՍՆՄ-յան մեջ խոշոր կո-
լեկտիվ տնտեսութեան անցնելը (վորը հիմնականում կա-
վարտվի ամբողջ խորհրդային յերկրում 1933 թ.) անմի-

շապեա խոշոր չափերով բարեկամում եւ կոլխոզային, արտելի աշխատանքի անցնողների նյութական գրությունը:

ԽՍՀՄ-յան մեջ արահատորները և կոմբայնները, վորոնք տասնյակ հազարներով շարքի յեն մտնելու արդեն հետևյալ տարուց, վոչ վոքին չեն քայքայի, չեն ամրացնի գյուղական կապիտալիստական վերնաշերտի — կուլակների ուժն ու հարստությունը: Ընդհակառակը, նրանք կոգնեն կոլխոզներին բարձրացնելու տասնյակ միլիոնավոր գյուղացիների կյանքի մակարդակը այնպիսի բարձրության վրա, վորպիսի բարձրության վրա յերբեք չի յեղել միջակ ու մանր գյուղացիների կյանքը նույնիսկ ամենահարուստ կապիտալիստական յերկրներում: Իսկ գյուղի կապիտալիստական վերնաշերտը-կուլակությունը — կվոչնչացվի, վորպեա դասակարգ, վերջնականորեն:

Տրակտորները, կոմբայնները և այլ բարդ գյուղատնտեսական մեքենաները վերջնականապես կամրապնդեն կոլխոզները, կոգնեն ներգրավելու գյուղացիների նոր միլիոններին, կոգնեն ավարտելու գյուղացիական տնտեսությունների համատարած կոլեկտիվացումը: Նրանք կոգնեն նոր միլիոնավոր գյուղացիներին միանգամ առմիշտ վերջ տալու չքավորության, աղքատության և յետամնացության:

Տրակտորները և կոմբայնները դժբախտություն են հանդիսանում հարուստ Ամերիկայի միլիոնավոր մանր ֆերմերների համար: Տրակտորները և կոմբայնները տեխնիկական հիմք են ծառայում կոլխոզների համար, վորոնք պատմական ամենակարճ ժամկետում վոչնչացնում են նախկին Ռուսաստանի գյուղատնտեսության դարավոր յետամնացությունը: Տրակտորները և կոմբայնները կոլխոզների տեխնիկական հիմքն են հանդիսանում, նրանց միջոցով տասնյակ միլիոնավոր գյուղացիներ միանգամ առմիշտ վոչնչացնում են իրենց չքավորությունն ու աղ-

քատությունը: Հենվելով կոլխոզների վրա, մենք վոչնչացնում ենք վերջին կապիտալիստական դասակարգը մեր յերկրում: Իսկ իրենք կոլխոզները կընթանան խոշոր պետական սոցիալիստական գյուղատնտեսական գործարանների վերածվելու ուղիով:

Դա յե մեքենայի հաղթական յերթի տարբերությունը Խորհրդային յերկրի դաշտերով և հարուստ կապիտալիստական Ամերիկայի դաշտերով:

ԻՆՇՈՒԻ ԶԲԱՎՈՐ ՅԵՎ ՄԻՋԱԿ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ ՁԵՌՆՏՈՒ ՅԵ ՄԻԱՆԱԼ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՄԵՋ



Այս հարցին մենք պատասխանում ենք հարյուրավոր խոշորագույն սովխոզների և հազարավոր կոլխոզների փորձով, վորոնց մեջ միլիոնավոր գյուղացիական, դեռևս յերեկ անհատական, տնտեսություններ այսօր ստեղծում են ընդհանուր արտելային գործ:

Գուցե այդ հազարավոր կոլխոզների փորձը ցույց ե տալիս, վոր գյուղացու կյանքը նրանց մեջ ավելի վճատ ե դարձել, քան նրա անհատական տնտեսության մեջ:

Վոր միլիոնավոր չքավորների համար կոլխոզը չքավորությունից և աղքատությունից փրկելու միակ ուղիղ ճանապարհն ե — դա անվիճելի յե: Դրա դեմ չեն կարող առարկել նույնիսկ մեր թշնամիները:

Բայց ինչ վերաբերում ե միջակ գյուղացուն, կան մեր յերկրում և արտասահմանում մարդիկ, վորոնք պնդում են, թե միջակ գյուղացու համար ձեռնառու չե կոլխոզ մտնելը:

Տեսնենք, վորքան ուղիղ ե այդ պնդումը: Ընկ. Յակովլև իր զեկուցման մեջ XVI համագումարում մեջ բերեց հետաքրքրական որինակներ, մեջ բերեց այնպիսի ցայտուն և գունեղ փաստեր, վոր այդորինակ բոլոր հնա-



րովի պնդումները ողն են ցնդում: Ահա թե ինչ եր
ասում նա՝

«Այսպես, ուրեմն, խոսքը միջակի մասին եւ Խնչն եւ այս-
տեղ հիմնականը: Պատասխանը գտնում ենք թեղիսների մեջ.

«Անհատական տնտեսություններից կոլեկտիվ տնտեսու-
թյան անցնելը կարող եւ իրագործվել միայն բանվոր դասա-
կարգի եւ չքավորության դաշինքի հիման վրա միջակի հետ,
վոր պարտավորեցնում եւ միջակին սխառեմատիկորեն գրավել
կոլխոզային ղեկավարութեանը»:

Բանվոր դասակարգի եւ գյուղական չքավորութեան մի-
ջակի հետ դաշինքի լողունգը բնորոշում եւ գյուղի զարգա-
ցումը մինչեւ կոլխոզի դուռը: Դրանով բնորոշվում են եւ մի
շարք գործնական հարցեր միջակի վերաբերմամբ, մասնա-
վորապես՝ միջակին կոլխոզի մեջ ղեկավարութեան գրա-
վելու հարցը:

Կոլխոզի կայունութեան աստիճանը շատ բանում կախ-
ված եւ նրանից, թե մասնակցում եւ, արդյոք, միջակը ղե-
կավարութեան մեջ, թե՛ վոչ: Տասնյակ փաստեր ցույց են
տալիս, վոր միջակի մասնակցութեան դեպքում կոլխոզի ղե-
կավարութեանը կոլխոզից դուրս գալու դեպքեր քիչ են
յեղել, հիմարություններ քիչ են կատարվել:

Քիչ չեն այնպիսի դեպքերը, յերբ ամեն կերպ աշխատում
են միջակին հեռացնել կոլխոզի ղեկավարութեանը մասնակ-
ցելուց: Յեւ կարող եյի մեջ բերել տասնյակ որինակներ,
յերբ միջակներին մերժել են անասունների բակի վարիչի
պաշտոնը «աջ թեքման դեմ պայքարելու» պատրվակով: Երբ
միջակներին հեռացրել են ողակավարների պաշտոնից այն
պատրվակով, թե «պետք եւ, վոր մեզ մոտ միայն չքավոր-
ներ լինին»: Երբ միջակներին թույլ չեն տվել մասնակցելու
կոլխոզի վարչութեան աշխատանքներին, վորի հետեանքով
միջակները դուրս են յեկել կոլխոզից: Հաճախ միջակներին
գրավում են մասնակցելու ղեկավարութեանը լոկ արտա-
քուստ — ընտրում են վարչութեան մեջ, բայց աշխատանք
չեն տալիս: Առիթ եւ ունեցել պատահելու դեպքերի, յերբ
միջակը թղթի վրա կոլխոզի ակտիվ եւ համարվում, իբրեւ
կոլխոզի վարչութեան պահապան կամ մառանապետ: Տոկոսը

պահպանված եւ — պրծավ գնաց: Այդպիսի դեպքերում մի-
ջակը վերավորանք եւ դուռ: Նրանից պահանջում են, իսկ
աշխատանք նրան չեն տալիս, ժողովներին չեն հրավիրում:

Իհարկե, այս բոլորը վոչ մի դեպքում չի նշանակում, թե
ամբողջ ղեկավարութեանը պետք եւ հանձնել միջակին: Դե-
կավարութեանը, իհարկե, պետք եւ մնա բանվոր դասակար-
գին, չքավորութեանը, բատրակներին: Բայց առանց միջակի
մասնակցութեանը ղեկավարութեան մեջ հաստատուն կոլխոզ
չես ստեղծի:

Մեզ մոտ մի ժամանակ զանազան «կիսաուսյալ եւ թերուս»
ըրջաններում լայնորեն տարածվեց այն «թեորիան», թե
կոլխոզը, իբր թե, ձեռնտու չեւ միջակի համար: Զանազան
«ուսյալ ըրջանները» ապացուցում եյին, թե միջակը մոտում
եւ կոլխոզ միայն այն պատճառով, վոր նրան քում են, վոր
նա կոլխոզում պահվում եւ հացամթերումներից: Նրանք բա-
ցատրում եյին այդ նրանով, վոր կոլխոզի գոյութեան առա-
ջին տարիները միջակը, իբր թե, իր յեկամուտի վորոշ մասը
պետք եւ զիջեւ չքավորին, ինքը կոլխոզից վոչինչ չհանելով:
Փորձը ամբողջովին ժխտեց այդ թեորիան, իբրեւ կեղծ: Այդ
թեորիան չարդարացավ արդեն իսկ այն պատճառով, վոր կոլ-
խոզի արտադրանքի բարձրացումը, իբրեւ աշխատանքի ար-
տադրողականութեան բարձրացման հետեանք, ճնշող մեծա-
մասնութեամբ այնչափ եւ լինում, վոր միանգամայն բավա-
կանանում եւ թե չքավորի յեկամուտը նախկին միջակային
մակարդակին հասցնելու համար եւ թե կոլխոզի մեջ գտնվող
միջակի յեկամուտը բարձրացնելու համար, համեմատած նախ-
կին յեկամուտի հետ:

Նկատի ունենալով այս հարցի կարեւորութեանը, յեւ այդ
դեպքում եւս դիմում եմ՝ վոչ միայն կուսակցութեան համա-
գումարին, այլ եւ բոլոր կոլխոզիկներին եւ բոլոր դեռեւս
վոչ-կոլխոզիկներին:

Կոմունիստական ակադեմիայի հատուկ հանձնաժողովը,
վոր այս տարի Կուբան եր ուղարկված, պարզել եւ հետեյալը:

Այս տարի «Հոկտեմբեր» կոլխոզում յուրաքանչյուր
տնտեսութեանը հասնելու յեւ միջին հաշվով 690 ու. արտա-
դրանք, յեւ թե պայմանավորվենք այս տարվա բերքը հաշվել

անցյալ տարվանին հավասար: Այդ նշանակում է, վոր չքա-
վոր-կոլխոզնիկի ընդհանուր արտադրանքը կաճի 330 ուղ-
լից (յեթե պայմանավորվենք ընդունել, վոր նա վոչ մի
լրացուցիչ անհատական տնտեսություն չի ունենալու) ավելի
քան յերկու անգամ, իսկ միջակի արտադրանքը 540 ուղ.
հասնելու յե 802 ո., հաշվելով նաև անհատական տնտեսու-
սության լրացուցիչ արտադրանքը, այսինքն $1\frac{1}{2}$ անգամ:
Դա — միջակ բերքի դեպքում: Իսկ այս տարի սպասվող լավ
բերքի դեպքում չքավորներին և միջակներին հասնող ընդ-
հանուր արտադրանքի աճման չափը ավելի ևս մեծ ե լինելու:
Դա բացատրվում է նրանով, վոր անցյալ տարի յուրաքան-
չյուր տնտեսությանը հասնում եր 4 հեկտար ցանքս չքա-
վորին և 7,7 հեկտար միջակին, իսկ այս տարի կոլխոզնիկի
ընտանիքին հասնում է 8,2 հեկտար և գումարած դրան մինչև
0,3 հեկտար անհատական ցանքս:

Այսպես և դրությունը ընդհանուր աշխատանքի տեսա-
կետից, գրեթե նույնն է և յեկամուտների նկատմամբ: Իսկ
յեթե վերցնենք ամբողջ յեկամուտը և դուրս բերենք նրա-
նից այն բոլորը, ինչ վոր պահանջվում է կանոնադրությամբ,
կպարզվի, վոր միջակային ընտանիքի յեկամուտը կոլխո-
զում նրա անցյալ տարվա յեկամուտից բարձր է, իսկ չքա-
վորի ընտանիքի յեկամուտը կոլխոզում ավելի բարձր է,
քան միջակի նախկին յեկամուտը: (Վորևե թյուրիմացու-
թյան տեղիք չտալու համար յես հաշվում եմ, վոր նախկին
չքավորը ունի միայն համայնացված յեկամուտ, իսկ նախ-
կին միջակը ոգտվում է իր անհատական տնտեսության
լրացուցիչ յեկամուտով այն չափով, վոր պարզել է քննու-
թյունը):

«Հոկտեմբեր» կոլխոզում (Կուբան) այս տարվա միջին
բերքի պայմաններում, ապրանքային ավելցուկները, չնայած
սպառման չափերի բարձրացմանը, հասնելու յեն 500.000 ո.,
իսկ լավ բերքի դեպքում նույնիսկ մեկ միլիոնի հանդեպ այն
200.000-ին, վոր ունեցել է նույն տնտեսությունը անցյալ
տարի:

Յեթե դեռ նորերս գյուղացին տրամադիր եր ամեն մի
անբերրիություն վերագրել կոլխոզներին, թույլ տվեք, խբե

հատուցում, այս տարվա լավ բերքի վորոշ մասը վերագրել
կոլխոզների և կոլխոզնիկների հաշվին:

Նույնպիսի տվյալներ են տալիս և մի շարք այլ քննու-
թյուններ: Կոլխոզցիներին հրահանգիչների կատարած քննու-
թյունը ցույց է տալիս, վոր «Հեղափոխության ակիքը» կոլ-
խոզում (Բորիսոգլեսկիյ շրջան) համայնացված արտադրու-
թյան ընդհանուր արտադրանքն է կոլխոզային մեկ ընտա-
նիքին՝ 545 ուղլի: Չքավորների համար դա $3\frac{1}{2}$ անգամ
ավելի յե նրանց անցյալ տարվա ընդհանուր արտադրան-
քից, վոր հասնում եր միայն 150 ո.: Չքավորների մի այլ
խմբի համար, վորոնք 1929 թ. ունեցել են 300—400 ո.
արտադրանք, դա նշանակում է աճում $1\frac{1}{2}$ անգամ, իսկ մի-
ջակների համար — 120 — 130 ուղլիյով:

Մի այլ քննություն, վորը կատարել են Կոլխոզցիներին
հրահանգիչները ընկ. Ստալինի անվան կոլխոզում Հյուսիս-
սային Կովկասում, ցույց է տալիս, վոր չքավորներից վո-
մանք կբարձրացնեն իրենց յեկամուտը 100 տոկոսով, մյուս-
ները — 150, 200, 300 տոկոսով, իսկ միջակները, միջին հաշ-
վով, 50 տոկոսով (յեկամուտը հաշվում են կանոնադրությամբ
նախատեսված բոլոր վճարումները դուրս հանելուց հետո):

Ուրալի «Կարմիր փարոս» բաշկիրական կոլխոզում այս
տարի յուրաքանչյուր ընտանիքին հասնելու յե միջին հաշ-
վով 95 փութ ապրանքային հաց, այն ինչ անցյալ տարի
այդ կոլխոզի բառրակ անդամները բոլորովին ցանքս չեն
ունեցել, չքավորները ունեցել են 1—3 հեկտար ցանքս,
իսկ միջակները — 5—7 հեկտար և վերջիններս ստանում
եյին մոտ 60 փութ ապրանքային հաց մեկ տնտեսությանը:

Ինչո՞ւմ է այստեղ գործը: Գործը նրանումն է, վոր խո-
շոր տնտեսության առավելությունները հնարավորություն
են տալիս արդեն առաջին իսկ զարնանը չքավորի յեկա-
մուտը կոլխոզում հասցնելու միջակային մակարդակին և
միևնույն ժամանակ բարձրացնելու միջակի յեկամուտը:

Ահա թե ինչու միջակը մտնում է կոլխոզների մեջ: Ահա
թե ինչից են բղխում մեր հաշիվները, վոր միջակը ամբող-
ջությամբ մտնելու յե կոլխոզների մեջ: Ահա թե ինչու հիմ-
նական հացահատիկային ռաշոններում մենք արդեն զար-

գաղման ներկա շրջանում բաժանում ենք գյուղը հիմնականում կոլխոզնիկների և «առաջիկա դեռ վոչ-կոլխոզնիկների»։ Ահա թե ինչով, նորից կրկնում եմ, խոշոր տնտեսությունն ստեղծելու ուղին ԽՍՀՄ-յան մեջ տարբերվում է խոշոր տնտեսությունն ստեղծելու ուղիքից Հյուսիս-Ամերիկյան Միացյալ Նահանգներում»։

Կարելի չէ հազարավոր այլ որինակներով հաստատել չքավոր ու միջակ կոլխոզնիկի յեկամուտի բարձրացումը, համեմատած նորից մենատնտեսավարական յեկամտի հետ։ Ընկ. Յակովլևի բերած որինակները յես կլրացնեմ միայն Ներքին Վոլգայի Միակիրեյի կոլխոզի փորձով, վորի մասին մանրամասն խոսվում է հետևյալ գլխում։

Իր գոյություն առաջին իսկ տարին այդ կոլխոզը ստացավ վարկով — 12 ցանիչ, 10 հնձիչ, 3 կալսիչ, 1 բարդ ծեծող մեքենա, 10 յերկխոփանի գութան, 15 քամհար և 22 յերկաթե սայլ։ Կոլխոզի ամբողջ ինվենտարն է՝ — 14 հնձիչ, 3 կալսիչ, 1 բարդ ծեծող մեքենա, 42 գութան և 22 սայլ։ Անհատական տնտեսությունները ունեն յերկխոփանի գութաններ, փայտե ցաքաններ և մի քանի քամհար։

242 տուն կոլխոզնիկները ունեն 127 ձի, իսկ 161 տուն մենատնտեսավարները — 161 ձի. մենատնտեսավարներից շատ քչերը չունեն ձի, իսկ կոլխոզնիկներից 103 տնտեսությունն չունեն ձի։

Մենք արդեն այժմ տեսնում ենք, վոր կոլխոզը իր տեխնիկական սպառազինումով գերազանցում է անհատական տնտեսությունները։ Յանքսը կոլխոզում կատարված է ցանիչներով, վոր ավելի ծլում է տվել, քան թե մենատնտեսավարների ցանքսը, թեև վերջիններս ավելի սերմ եյին ցանել։ Կոլխոզը ունի 120 հեկտար յուղաբեր արևածաղիկ ցանքս, իսկ մենատնտեսավարները — վոչ մի հեկտար։ Կոլխոզը կառուցում է սիլոսային փոսեր, վորոնք կտան հարյուրավոր ցենտներ հյութալի, սննդարար կեր

տավարի համար։ Կոլխոզը սկսում է կառուցել խոզանոց առաջին նվազ 100 խոզի համար։ Այժմ գյուղում վոչ մի հատ խոզ չկա։ Կոլխոզը զարգացնում է մեղվաբուծություն, ձեռնարկում է վոչխարաբուծական տնտեսության կազմակերպության. ցեղային վոչխարներ ձեռք բերելու համար արդեն միջոցներ են բաց թողնված։ Ներկայումս գյուղում չկա վոչ մի հատ վոչխար։ Ցանված է 40 հեկտար ցելի հող։ Կասկած չկա, վոր յերբ կոլխոզը ստանա մշտական գյուղատնտեսական ցեղանի հողաշինարարությունը, նա կվարի հարյուրավոր հեկտար ցելի հողեր, վորոնք այժմ առանց գործ են ընկած, «հանգստանում են» մեր դաշտավարության հին, բարբառոսական սիստեմի շնորհիվ։

Մինչդեռ կոլխոզը միայն մեկ տարվա ընթացքում անագին թուխք է կատարում դեպի վեր, միանգամից սկսում է լայնորեն զարգացնել իր տնտեսությունը, կազմակերպելով անասնաբուծությունը, բարելավելով դաշտավարությունը և արագ գինվելով տեխնիկորեն, — անհատական գյուղացիական տնտեսությունները շարունակում են իրենց տեղում մնալ կամ այնքան դանդաղ են առաջադիմում, վոր չեն կարող դիմանալ վոչ մի համեմատության կոլխոզի հետ։

Կոլխոզնիկի ընդհանուր յեկամուտը արդեն այս տարի ավելի բարձր է լինելու, քան վոչ-կոլխոզնիկներինը, թեև ներկա մոմենտին, յերբ գրվում է այս գրքույկը, վերջնական թվերը դեռ չեն պարզվել։ Պետք է նկատի առնել նաև այն հարկային արտոնությունները, վորոնք տրվում են կոլխոզնիկներին։ Մյուս տարի կոլխոզնիկի — չքավորի ու միջակի — յեկամուտը ավելի ևս բարձր է լինելու վոչ-կոլխոզնիկի յեկամտից։

Այն բոլորը, ինչ վոր կատարում է այժմ Շնոր աշխարհ» կոլխոզը (խոզաբուծություն, վոչխարաբուծություն, դաշ-

տալին նոր մշակութիւններ, ցելի հողի ցանքսը, հողի մշակման հետագա բարելաւում, հետագա մեքենացումը — խոտտանում են տրակտոր, — սիլոսային գործի զարգացումը, գյուղատնտեսութեան մի շարք այլ, կոլխոզի համար նոր ճյուղերի զարգացումը), յերկու գարնանացանի և յերկու աշնանացանի կամպանիաների ընթացքում կհասցնի նրան այնպիսի բարձրութեան, վոր անհատական տնտեսութեանները իրենց զարգացման «տեմպերով» կոլխոզից շատ հեռու մնացած կլինեն, յեթե մինչև այդ նրանք ևս չմտնեն կոլխոզի մեջ:

Ահա թե ինչու մենք պայքարում ենք համատարած կոլեկտիվացման համար:

Ահա թե ինչու, տեսնելով կոլխոզի այս բացահայտ առավելութիւնը առանձին մանր մասնավոր գյուղացիական արտադրութեան հանդեպ, չքավորների ու միջակները նոր միջոցներ դիմելու յեն դեպի կոլխոզները: Սակայն, դա ինքն իրան, ինքնահոգով չի կատարվելու:

Մենատնտեսավար գյուղացին դիտելու յե տանտիրոջ աչքերով, թե ինչ և ինչպէս կստանա ամեն մի կոլխոզնիկ:

Այստեղ հատուկ նշանակութիւն ունի բերքի բաշխումը: Նրանից, թե վորքան ուղիղ կկարողանան բաշխել բերքը, կախված է հարյուր հազարավոր նոր անհատական գյուղացիական տնտեսութիւնների մուտքը կոլխոզների մեջ:

Գյուղացին ուշի-ուշով դիտելու յե, թե ի՞նչ և ինչպէս է կառուցում կոլխոզը, վորպիսի՞ նոր մշակութիւններ և արտադրութիւններ է մտցնում, ինչպէս է վարում իր գործերը — կմ, արդյոք, կարգ ու կանոն գոյքի մեջ, խնամքով են վերաբերվում, արդյոք, անասուններին, զանազան մանրութիւններին ինվենտարի մեջ. ինչպէս են աշխատում դաշտում, չկմ, արդյոք, ծուլութիւն, չկմ, արդյոք, տասնյակ նոր չինովներ, այսինքն — արդյոք չի՞ ուռցրած

կոլխոզի ապարատը, վորը կուլ է տալիս կոլխոզի յեկամտի խոշոր տոկոսը, չստեղծելով ինքը նյութական արժեքներ: Ինչպէս և ի՞նչ սերմեր են ցանում. ինչպէս են վարում: Առհասարակ այն բոլորի մեջ, ինչ վոր կատարում է կոլխոզը, կմ, արդյոք, վոչ միայն դրամական կամ նյութական շահ, այլ և ավելի լավ որինակ, լավ նմուշ, համեմատած այն աշխատանքի հետ, վոր կատարում է նա, մենատնտեսավարը իր տնտեսութեան մեջ:

Յեւ վետք է ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի յուրաքանչյուր մենատնտեսավար կարողանա վորքան կուլելի յե մանրամասնորեն և ուշադրութեամբ ծանոթանալ մշտապես իր գյուղի կամ հարևան գյուղի կոլխոզի հետ:

Մենատնտեսավարի առաջ յուրաքանչյուր կոլխոզնիկ պետք է նախ և առաջ ցուցադրե այն արմատական փաստերը, վորոնք արդեն ներկայումս ցուցաբերում են տվյալ կոլխոզի առավելութիւնները տվյալ գյուղի կամ շրջանի անհատական տնտեսութիւնների հանդեպ: Այդպիսի արմատական փաստեր, նայած տեղական պայմաններին, կարող են լինել՝ — ցանքսերի տարածութեան լայնացումը, ցանքսի տարածութեան ավելանալը կոլխոզային յուրաքանչյուր ընտանիքի համար, բերքատվութեան բարձրացումը կոլխոզային դաշտերում, յեկամտի նոր աղբյուրները հանձինս խոզաբուծութեան, անասնապահութեան և այլն, կոլխոզի տեխնիկական սպառազինման արագ բարձրացումը (այսքան մեքենա ունենք, այսքան ել շուտով կստանանք), գիտութեան ավելի լայն գործադրումը դաշտավարութեան, անասնաբուծութեան և կոլխոզային արտադրութեան այլ ճյուղերի մեջ և զրա հետևանքները: Յեւ, վերջապես, իբրև կոլեկտիվ աշխատանքի արդյունք, կոլխոզնիկի յեկամտի բարձրանալը նրա անհատական տնտեսավարութեան ժամանակվա յեկամտի համեմատութեամբ այսքանով:

Կոլեկտիվ, արտելային աշխատանքի արդյունքն է լինում տնտեսութեան արագ վերելքը և ընդլայնումը: Ուրեմն, արտելային աշխատանքը կտա յերկրին ավելի մթերքներ և հումուլթ՝ գործարանների համար: Հետևաբար, կոլտոգների զարգացման դեպքում մենք կկարողանանք համեմատաբար կարճ ժամանակամիջոցում վերջ տալ պարենանյութերի և հումուլթի պակասին, ուրեմն և վերջ տալ ապրանքային սովին յերկրում: Այդ հարցը ևս պետք է պարզել մենատնտեսավարների առաջ:

Սակայն, առաջ քաշելով այս արմատական փաստերը, չպետք է քողարկել և մեր բոլոր տեխնիկական ու կազմակերպչական թերությունները. վատ է դրված, որինակ, հաշվառքը, վատ է կամ թույլ պլանավորումը, չի կանոնավորված ինչպես հարկն է մեքենաների, բանուկ տավարի և մարդկանց բաշխումը ըստ աշխատանքների: Չպետք է ծածկել և ուղղակի սխալները, այլ և այն գուցե և մանր թերությունները, վորոնց վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել:

Պետք է հիշել, վոր թե՛ մենատնտեսավար գյուղացին և թե՛ մենք ինքներս մոտենում ենք կոլտոգին այլ չափանիշով, քան թե անհատական տնտեսություններին: Յեթե անհատական տնտեսութեան մեջ անհրաժեշտությունը ստիպում էր մեզ հաշտվել վորևե թերութեան հետ, կոլտոգում չի կարելի հաշտվել դրա հետ: Կոլտոգը գյուղատնտեսութեան ամենաբարձր աստիճանն է: Գյուղատնտեսական արտելը կոլեկտիվ սոցիալիստական կազմակերպություն է: Այդ իսկ պատճառով նա պետք է ամենալավ որինակը լինի, նմուշը, այլ վոչ այնպիսի անկարգ, անարխիական, ուժերն ու միջոցները ավելորդ վատնող տնտեսություն, վորպիսին է անհատական տնտեսությունը: Այդ պատճառով կուսակցութեան XVI համագումարը շատ ուղիղ է դնում հարցը

այն մասին, վոր կոլտոգային շարժման հետագա հաջողությունները և չքավոր-միջակային նոր մասսաների ներգրավումը կոլտոգների մեջ անագին չափերով կապված է կոլտոգների տնտեսական ամրացման, մենատնտեսավարների հետ կանոնավոր փոխհարաբերություններ սահմանելու հետ:

Չքավոր-միջակային նոր մասսաները կզան դեպի կոլտոգները, վորովհետև նույնիսկ դեռ ևս իրանց աշխատանքը չկարգավորած կոլտոգները արդեն տալիս են յեկամտի բարձրացում, համեմատած անհատական տնտեսությունների յեկամտի հետ: Նրանք կզան և այն պատճառով, վոր կոլտոգներում նրանք կտեսնեն տնտեսական կազմակերպութեան այլ, ավելի լավ նմուշ, քան թե ամենալավ անհատական տնտեսութեան մեջ:

Այդ մասին չպետք է մոռանալ, մանավանդ չպետք է մոռանան նրանք, ովքեր կարծում են, թե յեկամտի բարձրացումը կոլտոգում ամեն ինչ կլճուի և թե միայն այդ նշանակութուն կունենա նոր-միջակային-չքավորական մասսաներ կոլտոգների մեջ ներգրավելու համար:

ԿՈԼԽՈՋՆԻԿՆԵՐԻ ՈՒ ՄԵՆԱՏՆԵՍԱՎԱՐՆԵՐԻ ՓՈԽՂԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թե՛ ինչպես և ինչպիսի հարաբերություններ են ստեղծվում մենատնտեսավար գյուղացիների և կոլտոգնիկների միջև — այդ հարցը մեծ նշանակութուն ունի կոլեկտիվացման հետագա հաջողությունների համար: Ընկ. Յակովլևի գեկուցման առթիվ ընդունված բանաձևի մեջ համագումարը հատուկ վորոշում ընդունեց այն մասին, թե ինչպես պետք է վերաբերվել մենատնտեսավար գյուղացուն: Համագումարը առաջարկում է չհետապնդել մենատնտեսավարներին, այլ ոգնություն և աջակցություն ցույց տալ

նրանց և ամեն կերպ գրավել զեպի կոլխոզը: Յեւ այդ միանգամայն ուղիղ վորոշումը պետք է իրագործել ամենայն վճռականությամբ և հաստատակամությամբ:

Բերենք մի քանի որինակներ կոլխոզնիկների և մենատնտեսավարների փոխհարաբերությունների պրակտիկայից:

Միտկերեյ գյուղը գտնվում է Ներքին-Վոլգայի յերկրամասի, Բալաշովի շրջանի, Բեկովի ուայոնում: Գյուղը ունի 400 տուն: Անցյալ տարվա ձմռանը գյուղում կային չորս փոքրիկ կոլխոզներ: Գարնանը նրանք միացան և կազմեցին միասնական կոլխոզ «Նոր աշխարհ» անունով: Կոլխոզից դուրս մնացին 79 տուն: Գարնանացանից հետո 88 տնտեսություն դուրս յեկան կոլխոզից: Կոլխոզի մեջ մնացին ու հաստատվեցին 242 տուն, կոլխոզից դուրս — 161 տուն: Այդպիսով գյուղում ստեղծվեցին յերկու բավականին բազմամարդ բանակներ — մենատնտեսավարական-մասնավոր և արտելային, կոլխոզային-սոցիալիստական:

Կոլխոզնիկների և մենատնտեսավարների հետ յեղած խոսակցություններից ու զրույցներից, այլ և գյուղի բնակիչների ընդհանուր ժողովից պարզվեց, վոր թե մեկ և թե մյուս կողմից կան շատ հարձակումներ իրարու դեմ: Կոլխոզնիկները հաստատ պաշտպանում են իրենց կոլխոզը:

Շարժային կոլխոզնիկներից և կոլխոզուհիներից շատերը յերբեմն յերկար ժամերով վիճում են մենատնտեսավարների հետ, ապացուցելով նրանց կոլխոզի առավելությունները: Մենատնտեսավարներից շատերի վճռական համառությունը, նրանցից մի քանիսի խիստ հարձակումները կոլխոզնիկների վրա, յերբեմն սուտ մեղադրանքներ բարձելը կոլխոզնիկների ուսերին ջղայնացում է կոլխոզնիկներից շատերին և այդ ջղայնացումը յերբեմն ընդունում է այնպիսի խոսակցությունների ձև, թե մենատնտեսավարները աղբ են, զիբիլ, թափթփուկներ:

Կան և այսպիսի յերևույթներ — կոլխոզնիկների մի մասի մեջ, զլխավորապես ղեկավարող ախտիվի շրջանում, յերևան են գալիս հիմանդազին տրամադրություններ, վորոնք արտահայտվում են նրանում, վոր կսխտոգնիլը իրեն բարձր է դասում մենատնտեսավարից: Ընդհանրապես ասած, դա վատ չէ. բայց այստեղ դա ստանում է վորոշ արհամարհանքի բնույթ մենատնտեսավարների նկատմամբ. իսկ դա արդեն վտանգավոր է:

Ախտիվիստ-կոլխոզնիկներին հաճախ պակասում է անհրաժեշտ ինքնազսպումը և սառնասրտությունը, վորպեսզի ամեն մի, նույնիսկ սուտ մեղադրանքներին պատասխանեն հանգիստ պարզաբանություններով: Նրանք արագ յենթարկվում են բնական վրդովմունքի զգացմանը:

Մենատնտեսավարներից շատերի համար, թե առաջ կոլխոզի մեջ յեղածներից և թե նրա մեջ յերբեք չեղածներից, կոլխոզի առավելությունների հարցը, ասես, պարզ լինի: Մենատնտեսավարներից շատերի հետ զրուցելիս, մենք հանգում եյինք միաձայն յեզրակացության կոլխոզների առավելությունների մասին համեմատած անհատական տնտեսության հետ:

Նույնիսկ ավելին. մենատնտեսավարներից վումանք, համաձայնելով ինձ հետ, իրանք ավելի լուրջ տվյալներ եյին բերում կոլխոզի ոգտին, քան թե յես կկարողանայի մեջ բերել, վորովհետև նրանք հենված եյին իրենց անձնական փորձի վրա անհատական տնտեսության մեջ և կոլխոզի թեկուզ և փոքրիկ փորձի վրա հենց այստեղ, իրենց գյուղում: Բայց կոլխոզ մտնել առայժմ չեն ուզում: Ասում են —

— Սպասենք, տեսնենք ինչ դուրս կգա բերքի բաշխումից կոլխոզում:

— Մենք, ախր, դեմ չենք:

— Մենք միշտ ել պատրաստ ենք կոլխոզ մտնելու Բայց ուզում ենք սպասել, նայել, դիտել:

Իսկ կոլխոզը, նրա ղեկավարող ակտիվը դեռ չի սովորել ջոկել այդպիսի տատանվող մենատնտեսավարներին նրանց ընդհանուր զանգվածից, ավելի մոտ քաշել նրանց կոլխոզին, ներգրավել կոլխոզի կատարվող զանազան ձեռնարկումների մեջ և աննկատելի կերպով կոլխոզի մեջ ներգրավել: Գյուղում կան այնպիսի գյուղացիներ, վորոնք ուղղակի ամաչում են, վոր հեռացել են կոլխոզից, իսկ մեկի մասին նույնիսկ պատմում են, վոր նա յերկու շաբաթ ե, ինչ ման ե ածուժ գրպանում կոլխոզի վարչությանը ուղղված հայտարարությունը իրեն յետ ընդունելու մասին, բայց վճռականություն չի գտնում ներկայացնելու այն, վախենալով, վոր կսկսեն նախատել, հանդիմանել, թե, այ, դուքս յեկար, իսկ այժմ նորից ես գալիս և այլն:

Մենատնտեսավարների «ֆրոնտը» շատ ձեղքեր ունի հանձին տատանվողների և կոլխոզի և անհատական տնտեսության միջև կես ճամբին կանգնածների: Պետք ե ասել, վոր կոլխոզնիկները դեռևս անհրաժեշտ չափով չեն ոգտագործում այդ ձեղքերը:

Այստեղ ընդգծված են կոլխոզնիկների և մենատնտեսավարների փոխհարաբերությունների պակասավոր, ստվերոտ կողմերը: Բայց նույն այդ գյուղում մենք ունենք և գարմանալի, իսկական բոյլչեիկական որինակներ, թե ինչպես պետք ե ամրացնել կոլխոզի և մենատնտեսավարի ընկերությունը: Բերենք թեկուզ մի որինակ:

Հունիսին տեղի ունեյին կոլխոզի վարչության վերընտրությունները: Վերընտրություններից առաջ գյուղում խոսում եյին ինչ-վոր անկանոնությունների մասին կոլխոզի ֆինանսներում: Խոսում եյին մենատնտեսավարների մեջ: Յեվ ահա կոլխոզի նախագահի առաջարկով, կոլխոզի

գրամական գործերը ստուգելու համար ընտրվեց վերաստուգիչ հանձնաժողով, կիսով չափ բաղկացած... մենատնտեսավարներից: Այդ քայլը ուժեղ ոպողեցիա առաջացրեց կոլխոզի մի շարք ակտիվիստների կողմից, բայց նախագահը պնդեց իր առաջարկի վրա, ասելով —

— Վոչինչ, ընկերներ, թող իրենք ստուգեն. կոլխոզը մեր ընդհանուր գործն ե:

Հետևանքը: Հետևանքը փայլուն եր, շատ ուշադիր ու չափազանց բարեխիղճ ստուգումից հետո գրամական գործերը միանգամայն կարգին ճանաչվեցին և բոլոր խոսակցություններին վերջ դրվեց:

Իհարկե, դա կոլխոզային կանոնադրության ձևական խախտումն ե: Իհարկե, կոլխոզի գործերը պետք ե ստուգեն կոլխոզի անդամները: Բայց ով կարող ե դատապարտել կոլխոզի այն ղեկավարներին, վորոնք մենատնտեսավարների հետ ընկերական կապերը ամրացնելու նպատակով վորոշ չափով շեղվում են որենքի ձևական կողմից, նրա տառից: Կարծում եմ, վոչ վոք: Չե վոր գրավելով մենատնտեսավարներին կոլխոզի դրամական գործերի ստուգմանը, վորքան վոր խոսակցություններ կային ղեղծումների մասին, կոլխոզի նախագահը և այլ ղեկավարները տեղական կոնկրետ պայմաններում շատ ավելի մոտեցրին մենատնտեսավարներին կոլխոզին: Նրանք կարողացան ջախջախել շատ մենատնտեսավարների անվստահությունը դեպի կոլխոզը, ջախջախել դատապարգային թշնամիների հերյուրանքները դրամական չարագործագրումների խոսակցությունների շուրջը:

Այդ միջոցով տեղական կոնկրետ պայմաններում կոլխոզի ղեկավարները հասան նրան, վոր մենատնտեսավար-

ներից շատերը սկսեցին այլ կերպ նայել կոլխոզին, իբրև իրենց մոտ գործի վրա:

Այսպիսի փաստերով, այսպիսի որինակներով պետք է պատասխանե յուրաքանչյուր կոլխոզնիկ կոլխոզը վարկաբեկելու փորձերին, չարանենգ զրպարաություններին, իբր թե կոլխոզները թշնամի յեն մենատնտեսավարներին, չքավորներից ու միջակներից վոմանց այն անկեղծ մոլորությանը, թե կոլխոզները նրանց թշնամին են, թե կոլխոզին մոտենալ ել չի կարելի:

Բայց մեր կոլխոզնիկները ունեն և ուրիշ փաստեր ասպացուցելու, վոր նրանք մտածում են վոչ միայն իրենց շահերի մասին: Նույն Միկտիրեյի կոլխոզում մոտ հարյուր հեկտար կորեկ ընկնում եր բաժին կոլխոզից դուրս յեկածներին: Մենատնտեսավարների մի փոքրիկ մասը միայն աշխատում եր կոլխոզուհիների հետ միասին—քաղհանում: Բայց նրանք, իհարկե, չեյին կարող մշակել կորեկի ցանքսի ամբողջ բաժինը, վոր հասնում եր դուրս յեկողներին: Մոտ հարյուր հեկտար կորեկ կորստյան սպառնալիքի տակ եր:

Կոլխոզնիկները ուղղակի հայտարարեցին—

— «Մենք թույլ չենք տա, վորպեսզի մենատնտեսավորները անգիտակցության պատճառով կորստյան մատնվի հարյուր հեկտար կորեկի ցանքսը: Դա հարված կլինի պետութանը: Մենք մշակում ենք այդ կորեկը, առանց նույնիսկ հարցնելու, թե ինչ և ինչպես կստանանք այդ աշխատանքի համար:

Ահա գիտակից վերաբերմունքի նմուշ դեպի տնտեսությունը: Ահա գյուղատնտեսության նշանակության բոյլ-շեկակալան ըմբռնման որինակ խորհրդային կառավարության համար: Ահա նմուշ իսկական կոմունիստական վերաբերմունքի դեպի տնտեսությունը, իբրև սոցիալիստական շինարարության ընդհանուր գործը:

Իր ղեկուցման մեջ կուսակցության XVI համագումարում ընկ. Յակովլևը հետաքրքրական փաստեր եր բերում կոլխոզի և մենատնտեսավարների փոխհարաբերություններից: Ահա ինչ եր ասում նա՝

«Առանձին ուսյոններում մենք ունեցանք սխալ վերաբերմունքի պրակտիկա դեպի մենատնտեսավարները, մենատնտեսավարների հետապնդումը, վորը թեկզբվում եր արտաքուստ հատուկ նվիրվածությամբ կոլխոզներին, իսկ իրականում միայն ֆուսում եր նրանց: Այդ սխալ վերաբերմունքը դեպի մենատնտեսավարները արտահայտվում եր յերբեմն մենատնտեսավարների նորման կրճատելու մեջ այն դեպքերում, հերբ հողը բավական եր թե կոլխոզների և թե մենատնտեսավարների համար, մենատնտեսավարների պատրաստած հողը կոլխոզներին հանձնելու մեջ, կոլխոզի մեջ նոր անդամներ ընդունելը մերժելու մեջ, տեղական որգանների հրաժարվելու մեջ մենատնտեսավարների մեջ աշխատելուց, ցանքսի պլանը մենատնտեսավարին հասցնելուց, մենատնտեսավարին նույն իսկ բավարար քանակով յեղած ապրանքներով մատակարարելուց հրաժարվելու մեջ և այլն: Այստեղ խոսեն ել ավելորդ ե այն մասին, վոր նման վերաբերմունքը կոպիտ սխալ ե, արմատորեն հակասում ե թեզիսներին, վորոնք մենատնտեսավար չքավորի ու միջակի վրա նայում են վորպես վաղվա կոլխոզնիկների վրա:

Չպետք է մոռանալ, վոր «այսուհետ և ՆՍՀՄ-յան կարևորագույն հացահատիկային շրջաններում գյուղը բաժանվում ե յերկու հիմնական մասերի—կոլխոզնիկների, վորոնք խորհրդային իշխանության իրական ու հաստատուն նեցուկն են հանդիսանում, և վոչ—կոլխոզնիկների—չքավորների ու միջակների, վորոնք առայժմ չեն ցանկանում կոլխոզ մտնել, բայց վորոնց կոլխոզների մասսայական փորձը կհամոզի, անկասկած, համեմատաբար ամենակարճ ժամկետում կոլեկտիվացման ուղին անցնելու անհրաժեշտության մեջ» (թեզիսներ):

Չափազանց կարևոր է, ընկերներ, նկատի ունենալ այդ ֆորմուլայի նաև յերկրորդ մասը: Չէ՞ վոր թեղիսների այս բաժնում առաջադրվում է վոչ միայն կոլխոզնիկների վրա հենվելու լողունգը, իբրև ներկա շրջանի գլխավոր լողունգը, այլ կա նաև յերկրորդ մասը—թե տեսականորեն և թե գործնականորեն չափազանց կարևոր — մենատնտեսական մասերի մասին, վորոնք համեմատաբար ամենակարճ ժամկետներում անցնելու յեն կոլեկտիվացման ուղին:

Կոլխոզների սահմաններից դուրս կա, անկասկած, «կիսակոլխոզնիկները», «վայրի կոլխոզնիկները» շատ մեծ շերտ, վորը սպասում է բերքի բաշխման արդյունքներին և մինչ այդ չի մտնում կոլխոզների մեջ: Այդպիսի «կիսակոլխոզնիկները» բավականին խոշոր թիվը, չմտնելով կոլխոզները, գործադրում եր այս գարնանը աշխատանքի կոլխոզային մեթոդներ (ձևեր):

Ինչի՞ մասին է վկայում դա:

Կոլխոզների յետևը կանգնած է կոլխոզ մտնելու համար արդեն գրեթե հասունացած գյուղացիների բազմամարդ շերտը: Նրանց կոլխոզ մտնելու արագությունը կախված է կոլխոզի ոգնությունից, նրանց հետ բարեկամական հարաբերություններ հաստատելուց, մեկ խոսքով, թե գիտնելի առաջադրած լողունգը իրագործելուց — «չհալածել մենատնտեսականներին, այլ ոգնել նրանց և ամեն կերպ գրավել դեպի կոլխոզը»:

Յերկրորդ մոմենտը մենատնտեսավարների վերաբերմամբ, վոր պետք է շեշտվի,— դա մենատնտեսավարների և կոլխոզնիկների մրցման դերն է այս տարվա գարնանացանի ժամանակ: Մեր մամուլը քիչ ուշադրություն նվիրեց այդ հարցին, մինչդեռ դա ահագին նշանակութուն ունեցող գործոն է: Ինչպես պատահեց, վոր այս գարնանը մենք ցանեցինք գրեթե 90 միլիոն հեկտար: Կարևորագույն դեր խաղաց այս դեպքում մրցումը: Յերբ

ըտլոր տնտեսությունների գրեթե քառորդը համախմբվեց կոլխոզների մեջ, յերբ դաշտերում պարզվեցին կոլխոզնիկների համար ահագին հնարավորություններ ցանքների տարածությունը ընդլայնելու նկատմամբ, այն ժամանակ մենատնտեսավարները ևս, թեկուզ և մի քիչ ուշացած, անցան ցանքի, վորպեսզի հարկադրված չլինեն իրենց հողը կոլխոզնիկներին գիշելու:

Սրա հետ կապված է նաև այն հարցը, թե ինչ վերաբերմունք պետք է ունենա կոլխոզնիկը դեպի այն չքավորն ու միջակը, վորոնք փախել են կոլխոզից զանազան խտտորումների ու գերակորումների պատճառով կամ սոսկ փախենալով: Իրանց թիվը այնքան էլ փոքր չէ: Այն հարցը, թե ինչպես վերաբերվել դեպի այդ «փախստականները» մեծ նշանակութուն ունի:

Հասկանալի յե ինքնապահության, վոր գարնանը կոլխոզից հեռանալու գալթակղությունը հաղթահարած, տնտեսությունը նոր ձևով կառուցելու առաջին փորձի ոխիկը հաճն առած մարդը նախատրամադրված է չհավատալու այդ «փախստականներին», կոլխոզից ծլկվածներին, նույն իսկ այն դեպքում, յերբ նրանք գալիս են փոշմանած, մեղա յեն գալիս: Սակայն, քաղաքական տեսակետից այդորինակ տրամադրությունները չափազանց փասակար են, յեթե նրանք առաջացնում են կոլխոզի մեկուսացումը, առանձնացումը:

Իսկ այդպիսի դեպքեր շատ են յեղել: Յեղել են դեպքեր, յերբ կոլխոզ վերադառնալու ցանկություն հայտնող նախկին կոլխոզնիկներին ընդունել են իբրև թեկնածուներ, վորոշել են կազմել նրանցից տուգանվածների բրիգադ և այն: Հետևանքն այն է յեղել, վոր հայտարարություն տվածները հրաժարվել են այդպիսի պայմաններով կոլխոզ վերադառնալուց և գերադասել են ֆալ մենատնտեսավար:

Իսկ կոլխոզնիկները, իբր թե շատ ձախ վարվելով, ստիպել են իրենց հարևաններին կառչելու անհատական տնտեսությունը:

Այդ իսկ պատճառով արտելների մեջ ընդունելիս կարող ե թույլատրվել միայն մի սահմանափակում — ժամկետների սահմանափակում: Գուցե ցանքսի շահերի տեսակետից ոգտակար կլինի ընդունելությունը կոլխոզի մեջ ընդհատել ցանքսից 1 — 2 ամիս առաջ, վորպեսզի չբեկվեն ինչպես կոլխոզնիկների, նույնպես և մենատնտեսավարների արտերը: Սակայն, այս հարցը պետք ե լուծվի տեղերում — տեղական պայմաններին համաձայն: Այդ հարցում չի կարելի յենթարկվել կոլխոզնիկների տրամադրություններին: Մենք պետք ե վճռականորեն դիմադրենք կոլխոզների դռները փակելու տենդենցներին, ձգտումներին: Այս տարվա ցանքսի արդյունքներից հետո բոլորովին զգվար չե փակել կոլխոզների դռները, բայց դրանից կսկսի փտել ամբողջ կոլխոզային գործը: Մենք այդպիսի լողուններ չենք կարող տալ. մենք մենատնտեսավարներին հաշվում ենք վաղվա կոլխոզնիկներ, մենք պայքարում ենք նրա համար, վորպեսի կոլխոզնիկների ներկա շերտին մոտենա արդեն աշնանից նոր բազմամարդ շերտը: Մենք պայքար ենք սկսում այդ նոր շերտերի համար — դա բղխում ե թեզիսներից, դրանումն ե չքավոր ու միջակ մենատնտեսավարների հետ յեղած փոխհարաբերությունների եռությունը:

Այդ նոր շերտի համար պայքար պետք ե սկսեն Խորհրդային Միության բոլոր կոլխոզնիկները:

Բերքահավաքի կամպանիան տվեց ահազին թվով չափազանց հետաքրքրական որինալներ, թե ինչպես են ստեղծվում կոլխոզների և մենատնտեսավարների փոխհա-

րաբերությունները դաշտային աշխատանքների ամենատաք պահին և թե ինչպես, գործը ուղիղ դրվելու դեպքում, մենատնտեսավարների մասսաները մոտեցվում են կոլխոզին միացյալ տնտեսական գործնեյություն ընթացքում: Ահա մի քանի որինալներ:

Ստալինգրադի շրջանում կազմակերպված են մի քանի հարյուր բրիգադներ մենատնտեսավարների: Խոպորի շրջանում աշխատում են 35 բերքահավաքի բրիգադներ, կազմված կոլխոզից դուրս յեկածներից և կոլխոզնիկների ղեկավարությամբ: Կոնեկտիվ աշխատանքի առավելությունները և լավ բերքի հեռանկարները մասսայական հոսանք առաջացրի դեպի կոլխոզները: Ստալինգրադի շրջանում կոլխոզ են վերադարձել ավելի քան 1000 տնտեսություն:

Մի շարք շրջաններում վերադարձել են բոլոր դուրս յեկածները: Մի շարք ռայոններում մենատնտեսավարները բերքահավաքը կատարել են կոլեկտիվորեն: Մի շարք կոլխոզներ հատուկ բրիգադներ են կազմել մենատնտեսավարների բերքը հավաքելու համար, այն մենատնտեսավարների, վորոնք, հետևելով կոլխոզի որինալին, բերքը հավաքում են կոլեկտիվորեն և հացը հանձնում են պետությունը:

Մի շարք շրջաններում բերքահավաքը կատարվել ե սոցմրցման և հարվածայնության մեթոդներով: Սոցմրցմանը մասնակցել են վոչ միայն կոլխոզները, այլ և մենատնտեսավարները: Դաշտերում աշխատել են հազարավոր հարվածային բրիգադներ: Դրեթե բոլոր շրջաններից բազմաթիվ տեղեկություններ են ստացվում կոլխոզնիկների և մենատնտեսավարների ամենասերտ համագործակցության մասին բերքահավաքի ժամանակ: Միևնույն ժամանակ հայտնում են որեցոր աճող հոսանքի մասին դեպի կոլխոզները — թե դուրս յեկածների և թե նոր բազմահազար չքավոր-միջակային մասսաների: (Այս տեղեկությունները վերցված են «Պրավդա»-յի և «Իզվեստիա»-յի 1930 թ. հուլիսի համարներից):

Պետք են, արդյոք, վորեն բացատրություններ այդ հազարավոր փաստերի հանդեպ, վորոնք գեղեցիկ կերպով հաստատում են կուսակցության համագումարի վորոշումը այն մասին, վոր կոլխոզնիկների և մենասնտեսավարների լարված հարաբերությունները արգելակ են հանդիսանում և վոր, վորքան ավելի լավ են այդ փոխհարաբերությունները, այնքան ավելի արագ կընթանա կոլեկտիվացումը, այնքան ավելի շուտ կավարտվի յերկրի համատարած կոլեկտիվացումը: Դժբախտաբար, քիչ չեն դեպի մենասնտեսավարը ցուցաբերված սխալ վերաբերմունքի ուրինակները: Յեթե այդ ուրինակները չլինեյին, համագումարը հարկադրված չեր լինի վորոշում կայացնելու այն մասին, վոր մենասնտեսավարին չպետք է հալածել, այլ պետք է նրան ոգնել ու աջակցել: Բերենք միայն մի ուրինակ, վորը ցույց է տալիս, թե ինչ հետևանքների յե հասցնում սխալ վերաբերմունքը դեպի մենասնտեսավարը:

«Պրավդա»-յում հուլիսի 21-ին գետեղված էր տեղեկություն Նովոսիբիրսկում կայացած 38 խոշոր մեխանիկացված կոլխոզների նախագահների և գյուղատնտեսների խորհրդակցության մասին: Բերջահավաքի ժամանակ պարզվել է բանվորական ուժի սուր պակասություն: Ինչպե՞ս էր գործը: Բանից դուրս է գալիս, վոր

«Փոխանակ առանձին կոլխոզների մեջ նոր անդամներ ներգրավելու, յենթադրվում էր դիմել վարձու բանվորական ուժի: Ռայոնական կազմակերպությունները և կոլխոզները ուշադրություն չեն դարձնում նոր անդամներ ներգրավելու վրա: Կոլխոզնիկների վորոշ մասի տրամադրություններին — «մենք աշխատել ենք, իսկ մեկ ուրիշը մեզ հետ միասին ոգտվելու յե դարձանացանի արդյունքներով» — ընդդիմադրություն չի ցուցադրվում: Այդորինակ տրամադրություններ ընորոշ են նաև մանր կոլխոզների համար: Կուղնեցիկ շրջանում յերեք կոլխոզ, վորոնք գերա-

կատարել են դարձանացանի պլանները, փոխանակ իրենց նվաճումների մասին հաշիվ տալու մենասնտեսավարների առաջ, դարձանացանի հանրագումարը կազմեցին... դրոշմալի ժողովում: Հետևանքը այն էր, վոր յերկու ամսվա ընթացքում վոչ մի հայտարարություն չըստացվեց ընդունվելու մասին: Ռայոնական աշխատողների վորոշ մասը արհամարական վերաբերմունք է ցուցադրում դեպի արտելը: Նովոսիբիրսկի շրջանի 17 կոլխոզների քննությունը պարզել է, վոր կոլխոզների աճման ընդհատվելու գլխավոր պատճառն է հանդիսանում մենատնտեսավարներին ոգնելուց հրաժարվելը: Այնտեղ, ուր կոլխոզները աշխատում են մենասնտեսավարների հետ, կան դրական հետևանքներ:

Այնտեղ, ուր կոլխոզները հաշվետվական կամպանիայեն կազմակերպվել մենատնտեսավարների առաջ, կազմակերպվել են նոր արտելներ և հողը միասին մշակող ընկերություններ:

Հենց այդպիսի վերաբերմունքի մասին, վորպիսին տեղ է դաել Սիբիրում, ընկ. Յակովլևը ասում էր կուսակցության համագումարում — «Մենք պետք է դիմադրենք կոլխոզի դոնոր փակելու տենդենցներին: Կոլխոզների դուրս փակել, պահել այս տարվա դարձանացանի արդյունքներից հետո այնքան էլ դժվար չէ, բայց այդ դեպքում կսկսի փտել ամբողջ կոլխոզային գործը»:

Յուրաքանչյուր կոլխոզ, յուրաքանչյուր կոլխոզնիկ պետք է չափե իր հաշտությունները վոչ միայն վարված հողերի ավելացման քանակով կամ բերքատվության բարձրացումով վոչ միայն յեկամտի բարձրացումով, այլ և նրանով, թե ինչ հարաբերությունների մեջ է նա շրջակա մենասնտեսավար գյուղացիության հետ: Արդյոք այդ հարաբերությունները նպաստում են մենատնտեսավարների ներգրավմանը կոլխոզի մեջ, թե, ընդհակառակը նրանց հեռանալուն, կոլխոզից յերես դարձնելուն են

նպաստում, չնայած կոլխոզի տնտեսական հաջողութիւններին և պարզ հայտնաբերված առավելութիւններին:

Պետք է հիշել, վոր Համկոմկուսի XVI համագումարը ընկ. Յակովլեւի գեկուցման շուրջը ընդունված բանաձեռն մեջ հատուկ վորոշում ունի «կոլխոզներին և մենաստեղծական վարեներին» փոխհարաբերութիւններին մասին»:

«Հաշվի առնելով մանր անհատական տնտեսութիւնից խոշոր կոլեկտիվ տնտեսութեան մոտակա տարիները կայանալիք լիակատար փոխանցման ամբողջ բարդութիւնը, մանավանդ նկատի ունենալով ԽՍՀՄ-յան արեւելքի անագին տեղիւնը փոխ վոր գոյութիւն ունեցող մինչ կապիտալիստական կացութիւն և խոշոր տնտեսութեան մասնաշաղկապ նմուշներին դեռ ևս բացակայելը բոլոր վոչ-հացահատիկային շրջաններում, համագումարը նախադրուշացում է կուսակցական կազմակերպութիւններին անհատական տնտեսութեան վորքէն տնտեսացումից, այն տնտեսութեան, վորը յերկրի մի շարք շրջաններում գոյութիւն է ունենալու դեռ համեմատաբար յերկար ժամանակ:

Ուղիղ վերաբերմունք սահմանելը դեպի անհատական տնտեսութիւնը, վերաբերմունք, վորը հետագայում թեթեւցնի կոլեկտիվացումը, դառնում է խոշոր չափով կոլխոզներին և մենատնտեսական վարեների փոխհարաբերութիւններին հարց: Այն սրված փոխհարաբերութիւնները կոլխոզներին և մենատնտեսական վարեների միջև, վորոնք առաջացան այս տարվա զարնանը մի շարք տեղերում կոլխոզներից հեռացումների և ամենից ավելի ակտիվ ու կոլեկտիվացման գործին նվիրված կոլխոզներին կոլխոզների պահպանութեան համար մղած պայքարի հետևանքով, արդէլակ են հանգիստանում հետագա կոլեկտիվացման: Այդ պատճառով համագումարը պարտավորեցնում է բոլոր կուսակցական կազմակերպութիւններին հասնել այնպիսի դրութեան, վորպէսզի կոլխոզներին և մենատնտեսական վարեներին փոխհարաբերութիւնները հիմ-

ն վեն հետեյալ կանոնի վրա՝ — չհալածել մենատնտեսական վարեներին, այլ ոգնութիւն ցուցց տալ նրանց և ամեն կերպ դրավել դեպի կոլխոզները:

Համագումարը կատեգորիկորեն դատապարտում է չքավոր ու միջակ մենատնտեսական վարք ուղացիներին կազմակերպութեան կոոպերատիվ ձևի հաճախ տեղի ունեցող թերագնահատումը, ձևի, վորի զարգացումը աստիճանաբար դեպի կոլխոզները անցնելու կարեւորագույն պայմաններինց մեկն է հանգիստանում: Համագումարը կոպիտ սխալ է հաշվում հասարակ, պարզ կոոպերատիվ կազմակերպութեան ստորին ձևերի (դուղական ընկերութիւններ և հատուկ արտադրական-սպառողական ընկերութիւններ) փաստացի լիկվիդացիան կոլխոզային թույլ շարժման մի շարք շրջաններում և առաջարկում է բոլոր կուսակցական կազմակերպութիւններին անհապաղ ապահովել կոոպերատիվ կազմակերպութեան վերականգնումը և հետագա աճումը, ցուցց տալով նրան համապատասխան կազմակերպչական և ֆինանսական աջակցութիւն»:

Համագումարի այս վորոշումը պետք է իրագործվի արագ ու հաստատուն կերպով: Ով չի հասկացել այդ վորոշումը, ով չի կիրառում այն, նա ամենամեծ վնասն է հասցնում կոլխոզային շարժմանը, նա կասեցնում է կոլխոզային շարժման հետագա հաջողութիւնները:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՊԵՐԱՑԻԱՆ ԿՈԼԽՈԶԻ ՈՒՂԻՆ Ե

Մենք տեսանք, վոր կոլխոզում աշխատանքի արտադրողականութիւնը միանգամից խիստ բարձրանում է: Առհասարակ ամեն մի կոլեկտիվ աշխատանք միշտ ավելի արտադրողական է, տալիս է ավելի մեծ քանակով պրոդուկտ կամ ապրանք, քան թե մենատնտես, մանր արտա-

դրող-տանուտերը: Յեթե վերցնենք 100 անհատական տնտեսություն և 100—կոլխոզային (որինակի համար այդ տնտեսությունները հաշվենք հավասար), կտեսնենք, Վոր կոլխոզը իսկույն 50 տոկոսով ուժեղացնում է բանվորական ուժի, անասունների և ինվենտարի ռեպարացիոն Սյդ մասին շատ լավ պատմեց մեր հողօրդկոմ ընկ. Յակովլևը կուսակցության համագումարում:

Նրա այդ պատմածը, այլ և Միտկիրեյի կոլխոզի որինակը մենք արդեն մեջ բերինք այս գրքույկի մեջ: Ընկ. Յակովլևը վերցնում է միջին հաշվով, բայց մենք ունենք և այնպիսի կոլխոզներ, ուր աշխատանքի արտադրողականությունը բարձրացել է 100 տոկոսով, այսինքն—կրկնակի:

Յեվ անհ, յեթե այն միլիարդ ռուբլին, վորը մենք ներկա տնտեսական տարում տրամադրում ենք կոլխոզներին ոգնելու գործին, փորձենք բաժանել միլիոնավոր չքավոր-միջակային տնտեսություններին, կստանայինք շատ չնչին արդյունք: Իսկ կոլխոզները այդ միլիարդով կկարողանան ավելի ևս մեծ չափերով, ավելի ևս արագ ընդլայնել հացի, անասունների, յուղի, թռչունների, մսի, բանջարեղենի և արդյունաբերական հումքերի արտադրությունը: Ահա թե ինչու մենք նաև ևս առաջ ոգնում ենք կոլխոզներին: Մեր գյուղատնտեսությունը արագ բարձրացնելու միակ ուղին է կոլխոզը: Սակայն, դա չի նշանակում, վոր պետք է անտես թողնենք անհատական տնտեսությունները:

«Գյուղում կատարվող ամբողջ գործնական աշխատանքի մեջ կիրառելով կոլխոզնիկի վրա հենվելու լողունը, կուսակցությունը պետք է վճռական պայքար մղի անհատական չքավոր-միջակային տնտեսության անտեսացման կամ թերազնահատման ամեն տեսակի տենդենցների դեմ, ոգնություն ցույց տալով այդ տնտեսությանը, ամբացնելով չքավորության ինքնուրույն կազմակերպությունները խոր-

հորհերում, կոոպերացիայում և կոլխոզային շարժման ստորադաս ողակներում, լայն աշխատանք տանելով մենատնտեսավարների մեջ, ներգրավելով նրանց կոլխոզների մեջ» (Կենտկոմի հաշվետվության առթիվ ընդունված բանաձևից):

Սակայն, ոգնելով մենատնտեսավարին, չքավորին ու միջակին, մենք այդ ոգնությունը պետք է այնպես տանենք, վորպեսզի մենատնտեսավարին դարձնենք կոլխոզնիկ:

Այժմ մենք կժանոթանանք մեր ոգնության այգորինակ ուղիներից մեկի հետ, վորը կարող է հարյուր հազարավոր անհատական տնտեսություններ բերել կոլխոզները համեմատաբար կարճ ժամկետում:

Մենք ասում ենք — մենատնտեսավար գյուղացին պետք է լիովին կատարի իր բոլոր գյուղատնտեսական աշխատանքները, պետք է միջոցներ ձեռք առնի ընդլայնելու իր ցանքսերի տարածությունը, բարձրացնելու իր դաշտերի բերքայնությունը, պետք է մասնակցի գյուղատնտեսական կոոպերացիային, նրա ոգնությամբ աշխատի ընդլայնել և բարելավել դաշտավարությունը, անասնապահությունը, թռչնաբուծությունը, մտնելով հատուկ արտադրական ընկերությունների մեջ — սերմնաբուծական, յուղագործական, թռչնաբուծական, զանազան տեխնիկական մշակույթների (արդյունաբերական հումքերի), մեքենային ընկերությունների մեջ — բամբակագործական, կտավատային և այլն:

Կուսակցությունը և խորհրդային իշխանությունը շահագրգռված են նրանում, վորպեսզի անհատական տնտեսությունները չիջեցնեն իրենց արտադրության մակարդակը, այլ, ընդհակառակը, բարձրացնեն այն: Ի հարկե, նրանք չեն կարող հասնել կոլխոզներին: Բայց չե՞ վոր անհատական տնտեսությունները իրենց ներկա

վիճակում ևս արտադրում են խոշոր քանակով մթերքներ և հումուլթ, վորոնք անհրաժեշտ են քաղաքների սննդա-
ռության և գործարանների աշխատանքի համար:

Մենք արդեն համոզվեցինք որինակներով, թե ինչ-
պես միանգամից բարձրանում է աշխատանքի արտադրո-
ղականությունը կոլխոզում: Արտադրական ընկերություն-
ների մեջ ևս (սերմաբուծական, յուղագործական, մեքե-
նային և այլն) գյուղացիական տնտեսությունը ավելի
արագ է բարձրանում, քան թե մենատնտեսավարների
մոտ: Թեպետ և դա դեռ ևս գյուղատնտեսական արտել
չէ, բայց ընկերության մեջ արդեն մի քայլ առաջ է
կատարվում, համեմատած անհատական տնտեսության հետ:

Առայժմ դեռ կոլխոզ չմտած անհատական տնտեսու-
թյունների պարզ արտադրական կոոպերացումը այն ուղիղ
ճանապարհն է, վորը համեմատաբար կարճ ժամկետում
կտանի նրանց դեպի կոլխոզը: Ընտելանալով այսօր միա-
սին աշխատելու, լավ, ընտիր, տեսակավոր սերմացու ձեռք
բերելու, կամ միասին գյուղատնտեսական մեքենային
տիրանալու (մեքենայական ընկերության մեջ), կամ ըն-
կերաբար անասուններ բուծելու (կաթնատու, մսային և
այլն), կամ վորևէ այլ միացյալ աշխատանքի, — գյուղա-
ցին աստիճանաբար, համեմատաբար արագ կանցնի դեպի
կոլխոզը: Գյուղատնտեսական կոոպերացիան սերտ կապ-
ված է խորհրդային իշխանության հետ, ստանում է նրա-
նից մեծ աջակցություն, արտոնություններ: Աշխատելով
կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, նա
պետք է իր գործնելիությունը գյուղացիներին զանազան
արտադրական ընկերությունների մեջ համախմբելու ուղ-
ղությամբ այնպես զարգացնի, վորպեսզի այդ տնտեսու-
թյուններն ընդհուպ մոտեցնի կամ ավելի կերպով կոլ-
խոզների մեջ միանալուն:

Մենք լավ գիտենք, վոր կոլխոզները թույլ եյին
զարգանում, վոր կոլխոզային շարժումը ամենից պակաս
էր ընդգրկում այն ռայոնները, ուր ամենից քիչ եյին
տրակտորները, քիչ եյին մեքենա-տրակտորային կայան-
ները, վորք եր կոլխոզների ու սովխոզների թիվը, ուր
թույլ էր գյուղատնտեսական կոոպերացիան,
ուր զարգացած չէին գյուղացիության մեջ
հասարակ, ամենապարզ ընկերությունները,
ուր գյուղացիները ամենից պակաս միասին
աշխատելու փորձ ունեյին:

Այդ պետք է լավ հիշեն բոլոր կուսակցականները,
գյուղական ակտիվիստները և անկուսակցական կոլխոզ-
նիկները, մանավանդ այն ռայոններում և շրջաններում,
ուր կոլեկտիվացման տոկոսը դեռ ևս փոքր է և ուր հա-
մատարած կոլեկտիվացումը ավարտվելու յե հիմնակա-
նում վոչ թե 1931 թ. գարնանը, այլ 1932/33 թ.: Ակ-
տիվիստ-կոլխոզնիկները (մնալով, ի հարկե, կոլխոզում)
պետք է արտաբերեն ավելի ուշադրություն, ավելի յե-
ռանդ, ավելի ուժ գյուղատնտեսական կոոպերացիայի աշ-
խատանքի մեջ, ոգնելով նրան մենատնտեսավար գյուղա-
ցիներին արտադրական և արտադրական-սպառողական ըն-
կերությունների մեջ ներգրավելու: Կուսակցության հա-
մագումարը իր վորոշման մեջ վճռականորեն դատապար-
տում է նրանց, ովքեր հաշվի չեն առնում մենատնտեսա-
վարների կազմակերպության կոոպերատիվ ձևերը: Համա-
գումարը պահանջում է անհապաղ վերականգնել գյուղա-
տնտեսական կոոպերատիվ կազմակերպությունները այն-
տեղ, ուր նրանք դադարել են գոյություն ունենալ:

Պետք է հիշել, վոր ձգտումը դեպի հասարակական
աշխատանքը շատ ուժեղ է անհատական միլիոնավոր
տնտեսություններում: Բայց այդ միլիոնների մեջ շատերը

չեն վստահանում միանգամից համաձայնելու բանլոր առաջադրանքների, ինվենտարի և ցանքների համայնացմանը: Համայնացրած, այսինքն կոլխոզային տնտեսություններն նրանց կարելի չե մոտեցնել և սովխոզների աշխատանքի փորձի միջոցով, և՛ թեկուզ այդ ռայոնում սակավաթիվ կոլխոզների ուղիղ դրված աշխատանքի փորձի միջոցով, և՛ մեքենա-տրակտորային կայանների աշխատանքի միջոցով, և՛ ամենապարզ արտադրական կոոպերացման միջոցով, այսինքն — ամենապարզ արտադրողական ընկերությունների, գյուղական ընկերությունների մեջ համախմբելու միջոցով:

Ահա թե ինչու կուսակցության XXVI համագումարը այդպես կտրուկ դրեց գյուղատնտեսական կոոպերացիային ուղադրություն հատկացնելու հարցը, այն գյուղատնտեսական կոոպերացիային, վորը շատ տեղերում անուշադրության և արհամարանքի յեր մատնված, վոր հատկապես վտանգավոր ե և մեասակար այն ռայոններում, ուր կոլեկտիվացման տոկոսը փոքր ե և համատարած կոլեկտիվացման իրականացման ժամկետը ավելի յերկար:

Ով չի հասկանում կուսակցական համագումարի այս վորոշման նշանակությունը և կամ չի կիրառում այդ վորոշումը բոլորեկական ամբողջ հաստատակամությամբ ու յեռանդով, նա կոլեկտիվացման ի վնաս ե գործում, նա կասեցնում ե մեր պայքարը ԽՍՀՄ-յան գյուղացիական բոլոր տնտեսությունների համատարած կոլեկտիվացման համար: Այսորվա մենատնտեսավարին, վորին մենք հաշվում ենք վաղվա կոլխոզնիկ, նրանք չեն գրավում դեպի կոլխոզը, այլ յետ են մղում կոլխոզից, խանգարում են այդ մենատնտեսավարին կոլխոզնիկի վերածելու գործին:

ԲԵՐՔԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԲԱՇԽՈՒՄԸ ՆՈՐ ՄԱՍՍԱՆԵՐ ԿԳՐԱՎԻ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՄԵՋ

«Այժմ վճռական նշանակություն ե ստանում կոլխոզային գարնան բերքի արդյունքների կանոնավոր բաշխումը... Կազմակերպել բերքի և կոլխոզային յեկամուտների կանոնավոր բաշխումը նշանակում ե վոչ միայն ամրացնել համապատասխան կոլխոզները, այլ և ապահովել չքավորների ու միջակների նոր հոսանքը դեպի կոլխոզները, նոր ռայոնների նվաճումը համատարած կոլեկտիվացման ճանապարհով»:

«Բերքի կանոնավոր բաշխումը այժմ մեր ամբողջ աշխատանքի հանգույցային խնդիրն ե կոլխոզների ամրացման ասպարիզում»:

«Բերքի բաշխումը կոլխոզում — խորը քաղաքական ակտ ե: Կոլեկտիվացման հաջողությունների ամրապնդումը, նրա հետագա արագ ընդլայնումը, կուլակի վերջնական ջախջախումը մասսայական կոլխոզային շարժման ռայոններում, նոր ու նոր շրջանների անցումը համատարած կոլեկտիվացման և այդ հիման վրա կուլակության, վորպես դասակարգի, լիկվիդացիան — այս բոլորը ահադին չափերով կախում ե ունենալու բերքի կանոնավոր բաշխումից»:

Մենք տեսնում ենք, թե ինչպես խիստ ընդգծվում ե այն նշանակությունը, վոր վերադրում են թե՛ կուսակցությունը և թե՛ Խորհրդային իշխանությունը կոլխոզների բերքի և յեկամուտների բաշխմանը:

Բերքի բաշխումը հետաքրքրում ե հավասար չափով և՛ կոլխոզնիկներին, և՛ մենատնտեսավարներին: Դա հասկանալի չե և առանձին բացատրություն չի պահանջում:

Գարնանացանը և բոլոր հետագա աշխատանքները մինչև բերքահավաքը և հենց ինքը բերքահավաքը ցուցադրեցին բացարձակ ակնբախությունը կոլխոզի առավելությունները անհատական տնտեսության հանդեպ:

չեն վստահանում միանգամից համաձայնելու բանլոր աշխատողներին, ինչպես տարի և ցանքների համայնացմանը: Համայնացրած, այսինքն կոլխոզային տնտեսություն նրանց կարելի չե մոտեցնել և սովխոզների աշխատանքի փորձի միջոցով, և՛ թեկուզ այդ ռայոնում սակավաթիվ կոլխոզների ուղիղ դրված աշխատանքի փորձի միջոցով, և՛ մեքենա-տրակտորային կայանների աշխատանքի միջոցով, և՛ ամենապարզ արտադրական կոոպերացման միջոցով, այսինքն — ամենապարզ արտադրողական ընկերությունների, գյուղական ընկերությունների մեջ համախմբելու միջոցով:

Ահա թե ինչու կուսակցության XXVI համագումարը այդպես կտրուկ դրեց գյուղատնտեսական կոոպերացիային ուղղորդվող հատկացնելու հարցը, այն գյուղատնտեսական կոոպերացիային, վորը շատ տեղերում անուշադրության և արհամարանքի յեր մատնված, վոր հատկապես վտանգավոր ե և վնասակար այն ռայոններում, ուր կոլեկտիվացման տոկոսը փոքր ե և համատարած կոլեկտիվացման իրականացման ժամկետը ավելի յերկար:

Ով չի հասկանում կուսակցական համագումարի այս վորոշման նշանակությունը և կամ չի կիրառում այդ վորոշումը բոլորիկական ամբողջ հաստատակամությամբ ու յեռանդով, նա կոլեկտիվացման ի վնաս ե գործում, նա կասեցնում ե մեր պայքարը ԽՍՀՄ-յան գյուղացիական բոլոր տնտեսությունների համատարած կոլեկտիվացման համար: Սյտորվա մենատնտեսավարին, վորին մենք հաշվում ենք վաղվա կոլխոզնիկ, նրանք չեն գրավում դեպի կոլխոզը, այլ յետ են մղում կոլխոզից, խանգարում են այդ մենատնտեսավարին կոլխոզնիկի վերածելու գործին:

ԲԵՐԲԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԲԱՇԽՈՒՄԸ ՆՈՐ ՄԱՍՍԱՆԵՐ ԿԳՐԱՎԻ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՄԵՋ

«Սյժմ վճռական նշանակություն ե ստանում կոլխոզային դարնան բերքի արդյունքների կանոնավոր բաշխումը... Կազմակերպել բերքի և կոլխոզային յեկամուտների կանոնավոր բաշխումը նշանակում ե վոչ միայն ամբացնել համապատասխան կոլխոզները, այլև ապահովել չքավորների ու միջակների նոր հոսանքը դեպի կոլխոզները, նոր ռայոնների նվաճումը համատարած կոլեկտիվացման ճանապարհով»:

«Բերքի կանոնավոր բաշխումը այժմ մեր ամբողջ աշխատանքի հանգույցային խնդիրն ե կոլխոզների ամբացման ասպարիզում»:

«Բերքի բաշխումը կոլխոզում — խորը քաղաքական կտ ե: Կոլեկտիվացման հաջողությունների ամրապնդումը, նրա հետագա արագ ընդլայնումը, կուլակի վերջնական ջախջախումը մասսայական կոլխոզային շարժման ռայոններում, նոր ու նոր շրջանների անցումը համատարած կոլեկտիվացման և այդ հիման վրա կուլակության, վորպես դասակարգի, լիկվիդացիան — այս բոլորը անհղին չափերով կախում ե ունենալու բերքի կանոնավոր բաշխումից»:

Մենք տեսնում ենք, թե ինչպես խիստ ընդգծվում ե այն նշանակությունը, վոր վերագրում են թե կուսակցությունը և թե Խորհրդային իշխանությունը կոլխոզների բերքի և յեկամուտների բաշխմանը:

Բերքի բաշխումը հետաքրքրում ե հավասար չափով և՛ կոլխոզնիկներին, և՛ մենատնտեսավարներին: Դա հասկանալի չե և առանձին բացատրություն չի պահանջում:

Դարնանացանը և բոլոր հետագա աշխատանքները մինչև բերքահավաքը և հենց ինքը բերքահավաքը ցուցադրեցին բացարձակ ակնբախություն կոլխոզի առավելությունները անհատական տնտեսության հանդեպ:

Բաշխումը այն կետն է, վորի վրա այժմ կենտրոնացած է ամբողջ ուշադրությունը:

Յեթե ձեզ հաջողվեց տեսնությունը վարել, կհաջողվի, արդյոք, բաշխումը և ինչ կստանա կոլխոզնիկը:

Այդպես է մտածում մենատնտեսավարը, վորը ահագին մեծամասնությունը հավատացել է կոլխոզի տնտեսական հաջողություններին արտադրության վերելքի իմաստով, բայց չգիտե, բայց կասկածում է — լինելի՞ս է, արդյոք, համապատասխան նյութական արդյունք:

Նրանք, ովքեր դեռևս ամուր կառչած են անհատական տնտեսությունը, նույնպես հետևում են լարված ուշադրություն, թե ինչպես է բաշխվում բերքը կոլխոզում, վորպեսզի մի անգամ ևս համեմատեն իրենց հաջողությունները կամ, ավելի ճիշտ, անհաջողությունները կոլխոզնիկների հաջողությունների հետ:

Կուլակները բոլոր ուժերն են մոբիլիզացիայի յենթարկել, վորպեսզի ապացուցեն, վոր կոլխոզնիկները վոչինչ չեն ստանա. նրանք ամեն կերպ բարդացնում և սրացնում են պարագաները բերքի բաշխման շուրջը, տեղատեղ փորձելով ազդել նաև կոլխոզնիկների վրա, վոր, սակայն, յերբեք չի հաջողվում նրանց:

Բերքի և կոլխոզային յեկամուտների բաշխումը միլիոնավոր չքավոր-միջակային մասսաների շարժման առաջին շրջանի ավարտումն է, յերբ կազմվում է կոլխոզների նվաճումների առաջին ամփոփումը, հանրագումարը:

Բերքի բաշխումը կոլխոզի առավելություն այնքան և՛ անհրաժեշտ է միլիոնավոր մենատնտեսավոր միջակայների համար:

Բերքի բաշխումը կուլակի վերջին հույսն է կուլեկտիվացումը վիժեցնելու: Ահա թե ինչու բերքի բաշխումը այդպիսի ահագին նշանակություն է ստացել և շահագրգռել է վոչ միայն կոլխոզնիկներին, այլև ամբողջ վոչ-կոլխոզային գյուղը:

Պետք է հիշի յուրաքանչյուր կոլխոզնիկ, յուրաքանչյուր ախտիվիստ, գյուղական յուրաքանչյուր կուսակցական և կոմյերիտական, վոր կոլխոզի բերքի ու յեկամտի բաշխման վրա այժմ կենտրոնացած է ամբողջ կուսակցության, ամբողջ բանվոր դասակարգի, ամբողջ գյուղացիության, բոլոր կոլխոզնիկների ուշադրությունը: Նրանք պետք է հիշեն, վոր բերքի և առհասարակ կոլխոզային յեկամտի կանոնավոր, ուղիղ բաշխումը միայն կոլխոզի ներքին գործը չէ, այլ վոր նա լուծում է հարյուր հազարավոր նոր կոլխոզնիկներ ստանալու հարցը այսօրվա մենատնտեսավարներից: Նրանք պետք է հիշեն, վոր բերքի ուղիղ բաշխումը մահացու հարված է լիվիդացիայի յենթարկվող կուլակությունը: Դա ահագին չափերով կամրացնի ներկայիս կոլխոզները, իբրև սոցիալիստական շինարարության հենակետեր գյուղատնտեսության մեջ:

Նրանք պետք է հիշեն, վոր բերքի ուղիղ բաշխումը պայքար է կուլակի դեմ, պայքար տատանվող մենատնտեսավարի համար, պայքար կոլխոզների ամրացման համար:¹

¹ Բերքի և ընդհանրապես կոլխոզի յեկամուտների բաշխման մասին մանրամասն տես — Դրոզդով «Աշխատանքի կազմակերպումը և բերքի բաշխումը կոլխոզում», մեր հրատ. 1931 թ.:

ԼՍՎԵՆՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Ո՞ւմ հայտնի չե մեր գյուղատնտեսության ահագին
յետամնացությունը:

Գյուղատնտեսության արագ վերելքի խնդիրը, ամենա-
կարճ ժամանակամիջոցում նրան զարգացման այնպիսի
տեմպի հասցնելը, վորպիսի տեմպով զարգանում ե մեր
արդյունաբերությունը, — այդ խնդիրը կարող ե լուծվել
միայն համատարած կոլեկտիվացման ուղիներով, սովխոզ-
ների ծավալման ուղիներով:

Համատարած կոլեկտիվացումը, վորը մենք սկսեցինք
մեր յերկրում սովխոզների հսկայական ծավալման հետ
միասին, բաց ե անում գյուղատնտեսության առաջ իր
թափով և իր տեմպերով միանգամայն անորինակ դար-
գացման հեռանկարներ:

Միայն շնորհիվ նրան, վոր մենք կիրառում ենք հա-
մատարած կոլեկտիվացման քաղաքականությունը, մենք
այս տարի, միայն մեկ գարնանացանից հնարավորություն
ենք ստանում ավելացնելու ցանքսերի տարած-
ությունը 7—8 միլիոն հեկտարով:

Միայն համատարած կոլեկտիվացման շնորհիվ մենք
կկարողանանք (ԽՍՀ Միության Հոգեղկումատի պլանով)
1931 թ. ցանքսերի տարածությունը ավելա-
ցնել 10—12 միլիոն հեկտարով և ընդլայնել այն
հետագա տարիները ավելի ու ավելի աճող չափերով:

Միայն համատարած կոլեկտիվացման շնորհիվ մենք
մոտակա 2-3 տարիների ընթացքում, Հոգեղկումատի վո-
րոշման համաձայն, կիրադործենք ցեղերի վոչնչաց-
ման հսկայական խնդիրը, ցեղերի, վորոնք
խլում են մեզանից ամեն տարի մինչև 30 միլ.

հեկտար վարելահող, վոր մնում ե առանց գործի:
Ցեղերը մեր բարբարոսական տեխնիկայի վիճակներն են, մեր
գյուղատնտեսության տեխնիկական սոսկայի աղքատու-
թյան ու յետամնացության վկայականը: Կարելի չե, ար-
դյոք, մանր, բաժան-բաժան գյուղացիական տնտեսու-
թյան պայմաններում այդչափ կարճ ժամանակամիջոցում
լուծել այդպիսի հսկայական ու համարձակ խնդիր, վորը
հակասում ե միլիոնավոր գյուղացիական տնտեսություն-
ների դարավոր փորձին ու սովորություններին: Ի հարկե,
վնչ: Իսկ նոր կուսական հողերը, վոր հերկում են սով-
խոզները: Նրանք հազարավոր հեկտարների յեն հասնում
արդեն այսօր: Ահա թե ինչ ե նշանակում համատարած
կոլեկտիվացում և սովխոզների շինարարություն:

Միայն համատարած կոլեկտիվացման շնորհիվ մենք
հնարավորություն ենք ստանում վոչ միայն իրականացնե-
լու, այլև գերակատարելու բերքայնությունը բարձրացումը
միջին հաշվով 35%-ով: Այդ խնդիրը դրված եր դեռ 1928
թվին և մինչև վերջին ժամանակները շատ ընկերների
թվում եր անիրագործելի: Բայց այն, ինչ վոր անիրա-
գործելի յեր թվում միլիոնավոր մանր, ցրված գյու-
ղացիական տնտեսությունների համար, լիովին իրագոր-
ծելի յե տասնյակ հազարավոր կոլխոզների համար, վո-
րոնք միացնում են միլիոնավոր գյուղացիական տնտեսու-
թյուններ:

Համատարած կոլեկտիվացման, այլև գոյություն ունե-
ցող սովխոզների լայնացման և նորերի շինարարության
հսկայական թափի շնորհիվ (արդեն վոչ միայն հացահա-
տիկային, այլև անասնապահական սովխոզների) մենք
մոտակա յերկու տարիների ընթացքում կհաղթահա-
րենք բոլոր դժվարությունները բնակչու-
թյանը միս, կաթ, յուղ մատակարարելու և

կաշվի ու բրդի արդյունաբերութեանը հո-
մուշի հասցնելու գործում:

Միայն համատարած կոլեկտիվացման և սովխոզների
շինարարութեան կատարի թափի շնորհիվ յերկու տարուց
մենք լիովին կլուծենք մեր տեքստիլ արդյունաբերու-
թյունը բամբակով ապահովելու խնդիրը և այնպիսի հու-
մուշի միայն բազա կստեղծենք նրա համար, վորը թույլ
կտա նրան ամենակարճ ժամանակում ծավալել արտա-
դրությունը բոլոր աշխատավորների պահանջները լրիվ
բավարարելու համար:

Միայն համատարած կոլեկտիվացման և սովխոզների
բացառիկ տեմպով ծավալվելու շնորհիվ մենք նոր հսկա-
յական հնարավորություններ կստանանք արտահանութեան
համար, ապա ուրեմն կկարողանանք ուժեղացնել մեքե-
նաների և սարքավորման ներմուծումը նոր կառուցվող
գործարանների համար:

Համատարած կոլեկտիվացումը և սովխոզների շինա-
րարութեան հսկայական ծավալումը պահանջում են ահա
զին քանակութեամբ գյուղատնտեսական մեքենաներ ու
գործիքներ և ամեն տեսակի տեխնիկական միջոցներ: Ահա-
զին պահանջներ են ներկայացվում արդյունաբերութեանը:
Դրանից բխում է մեքենակառուցման ծրագրի, մետաղա-
գործութեան և մեքենակառուցման նոր ահազին գործա-
րանների շինարարութեան ծրագրի անընդհատ լայնացման
անհրաժեշտությունը: Ուժեղանում են տեմպերը: Մենք
վոչ միայն հասնում ենք Ամերիկային, այլև նրանից առաջ
ենք անցնում արդյունաբերական խոշորագույն ձեռնար-
կությունների շինարարութեան ժամկետների տեսակետից:

Ահա թե ինչու մենք այսօր գոհարելու ենք շատ
անձնական պահանջներ: Ահա թե ինչու մենք այնպես
ենք սարքում մեր արտահանութեանը, վորպեսզի ամենից

առաջ ապահովենք մետաղահանութեան, մետաղամշակման,
մեքենակառուցման զարգացումը: Մետաղի արտադրու-
թյան ահազին և արագ ընդլայնման միջոցով, մեքենակա-
ռուցման ահազին ու արագ ընդլայնման միջոցով մենք
ամենակարճ ժամանակամիջոցում կհաղթահարենք պարե-
նային և հումուշիային դժվարությունները, ապա ուրեմն
և ապրանքների պակասությունից առաջացող դժվարու-
թյունները: Կհաղթահարենք մեր սեփական խորհրդային
արտադրութեան հիման վրա, կհաղթահարենք այդ դժվա-
րությունները այնպես, վոր արտադրությունը լիովին
կբավարարի բոլոր աշխատավորների պահանջներին:

Համատարած կոլեկտիվացումը և սովխոզների հսկա-
յական ծավալումը, նոր աղբյուրներ բանալով արտահա-
նութեան համար, միևնույն ժամանակ ուժեղացնում են
ներքին հումուշիային միջոցները և դրանով իսկ նպաս-
տում են ԽՍՀՄ-յան ինդուստրացման ուժեղացմանը
շրջադասող կապիտալիստական աշխարհից անկախութեան
հիմքերով: Իսկ ինդուստրացման ուժեղացումը իր հերթին
ուժեղացնում է կոլխոզային և սովխոզային շինարարու-
թյան տեմպը, ահազին չափերով ուժեղացնում է սով-
խոզների ու կոլխոզների տեխնիկական զինումը, վորի հե-
տևանքն է դարձյալ սննդամթերքների և հումուշիի ար-
տադրութեան հետագա աճումը:

Համատարած կոլեկտիվացումը և սովխոզների բուռն
աճը ուժեղացնում են, վերջապես, մեր յերկրի պաշտպա-
նունակությունը, վորովհետև լուծում են պարենավորման
պրոբլեմները, հումուշիի պրոբլեմները, ուժեղացնում են
յերկրի ինդուստրացման տեմպերը, ամենից առաջ — մե-
տաղի արդյունաբերութեան զարգացման:

Ահա թե ինչու կոմունիստական կուսակցութեան յու-
րաքանչյուր անդամ և յուրաքանչյուր ախտիվ կոլխոզնիկ

պետք է մշտապես աշխատեն կոլխոզի մեջ ներգրավել այն գյուղացիներին, վորոնք դեռևս մնում են իրենց անհատական տնտեսութեան մեջ:

ԶԹՈւլատրելով վոչ մի բռնութիւն, վճռականորեն կասեցնելով ամեն մի ճնշում կամ վարչական հարկադրանք, վոչնչացնելով «ձախ» խոտորումների մնացորդները այնտեղ, ուր նրանք պահպանվել են թեկուզ նախագագույն չափերով, մենք ամեն ուր անհկուն պետք է պայքարենք նոր միլիոնավոր անհատական գյուղացիական տնտեսութիւններ կոլխոզներէ մեջ ներգրավելու համար: Այս 1931 թվականին կոլեկտիվացման ուղին պետք է անցնի գյուղացիական տնտեսութիւնների վոչ պակաս, քան կեսը: Հնգամյակի վերջին ամբողջ ԽՍՀՄ-յան կոլեկտիվացումը հիմնականում պետք է վերջացած լինի:

Ջախջախելով աշ ու պորտուկիստներին, վորոնք կոլեկտիվացման դեմ ելին դուրս գալիս և վարագույր ծառայում կուլակի համար, ջախջախելով «ձախ» խոտորոգներին ու քալլագյուղներին, բանվոր դասակարգը կուսակցութեան ղեկավարութեամբ համարձակ տանում է միլիոնավոր չքավոր-միջակային մասսաները գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման ուղիով կոլխոզներէ միջոցով:

Աշ ու պորտուկիստները, թեև XVI համագումարը վորոշեց, վոր աշ ու պորտուկիստ հայացքները անհանդուրժելի յեն կուսակցութեան շարքերում մնալու համար, դիմակավորված ձևով դեռևս փորձելու յեն կասեցնել կոլխոզային շարժման գործի թափը: Բայց, ինչպես և առաջ, դեն չպրտելով աշ ու պորտուկիստական պոռոտախոսներին, նրանց հակառակ, կուսակցութիւնը և բանվոր դասակարգը հաստատ, համառորեն և հետեողականորեն իրականացնելով համագումարի այն վորոշումը, թե մենատնտե-

սավարներին չպետք է հալածել, այլ ոգնել նրանց և ամեն կերպ ներգրավել կոլխոզների մեջ, կհասնեն կոլեկտիվացման տեմպերի ուժեղացմանը, համատարած կոլեկտիվացման արագացմանը:

Խիստ դասակարգային կռիւների մեջ կուլակի հետ, վոր փորձում է վերջին անգամ իր կործանումից առաջ վնասել պրոլետարական դիկտատուրային բոլոր միջոցներով — ստոր գրպարտութիւնից մինչև կոլխոզային շարժման ահաբեկ աշխատավորների սպանութիւնը, — կուսակցութիւնը և բանվոր դասակարգը ներկա կոլխոզիկներէ — խորհրդային իշխանութեան այդ իրական և հաստատ նեցուկի — միլիոնավոր բանակի ոգնութեամբ, իրագործելով համագումարի վորոշումը մենատնտեսավարին ամեն կերպ կոլխոզին մոտեցնելու մասին, պատմական ամենակարճ ժամկետում կկարողանան չքավոր-միջակային մասսաներին ամբողջութեամբ ներգրավել կոլխոզների մեջ:



Ց Ա Ն Կ

Մեծագույն բեկումը	52
Հեղաշրջումը գյուղատնտեսության մեջ	3
Ինչու չքավոր և միջակ գյուղացուն ձեռնառու չի միանալ կոլխոզների մեջ	6
Մենատնտեսավարների և կոլխոզնիկների փոխհարաբերու- թյունների մասին	17
Գյուղատնտեսական կոոպերացիան կոլխոզի ուղին և . . .	27
Բերքի կանոնավոր բաշխումը նոր մասսաներ կգրավե կոլ- խոզների մեջ	41
Լծվենք կուսակցության համագումարի վորոշումները իրա- գործելու աշխատանքին	47
	50



ՀՀ Ազգային գրադարան



NL0210744

10603

30.201

15 400.

ЦЕНА 10

С.-Х. 1.



КЛИМ ЯРОВОЙ
Сегодняшний единоличник —
завтрашний колхозник
(Перевод с русского)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.